



Ecoline  
International

# ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ԿՐԱ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՅԱՏՈՒՄ (ՇՄՍԱԳ)

## ՍԻՍԻԱՆ-ՔԱԶԱՐԱՆ (ՐՅՈՒՄԻՍ-ՅԱՐԱԿ ՄԻՋԱՆՑՔ) ՃԱՆԱՊԱՐՅԱՅԱՏՎԱԾԻ ԾՐԱԳԻՐ, ՀԱՅԱՍՏԱՆ

### Հատոր 6. Բնապահպանական և Սոցիալական Կառավարման Պլան (ԲՍԿՊ)



Աղբյուր՝ նկարները Սիսիան-Քաջարան առաջարկվող ճանապարհի 3D հոլովակից, Ճանապարհային դեպարտամենտ, 2022  
[<https://www.youtube.com/watch?v=fu-dgAwjSsU>]

Հուլիս 2023

Էկոլայն Ինթերնեյշնլ ՍՊԸ, Բուկղարիա, 1000, Սոֆիա, Ռաչո Դիմչև 1, [www.ecoline-int.org](http://www.ecoline-int.org)

# ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ԿՐԱ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ (ՇՄՍԱԳ)

## ՍԻՍԻԱՆ-ՔԱԶԱՐԱՆ (ՀՅՈՒՄԻՍ-ՀԱՐԱՎ ՄԻՋԱՆՑՔ) ՃԱՆԱԴԱՐՀԱՀԱՏՎԱԾԻ ԾՐԱԳԻՐ, ՀԱՅԱՍՏԱՆ

### Հատոր 6. Բնապահպանական և Սոցիալական Կառավարման Պլան (ԲՍԿՊ)

#### Մշակված է



Ecoline  
International

Էկոլայն Ինթերնեյշնլ ՍՊԸ  
(Սոֆիա, Բուլղարիա)



Տնօրեն. Մայա Գաչեչիլաձե-Բոճեկու  
Հեռ. +38095 11 00 727 /  
+ 359 876 63 0522  
Էլ.փոստ.  
[mgachechiladze@ecoline-int.org](mailto:mgachechiladze@ecoline-int.org)



SE SOLUTIONS  
Advancing Environmental Sustainability

ՍԻ Ի Սոլյուշնս ՍՊԸ (ՀԱՀ)

Տնօրեն. Շոն Օ Բեյրն  
Հեռ. +27 (0)12 643 0190  
+27 (0)82 903 9751  
Էլ.փոստ.  
[sobeirne@tiscali.co.za](mailto:sobeirne@tiscali.co.za)



ATMS Solutions

ԷՅ ԹԻ ԷՍ ԷՍ Սոլյուշնս ՍՊԸ  
(Երևան, Հայաստան)

Տնօրեն. Արտակ Տեր-Թորոսյան  
Հեռ. +37491 497128  
+37499 109495  
Էլ.փոստ.  
[artak.ter-torosyan@atms.am](mailto:artak.ter-torosyan@atms.am)

#### Մշակված է

Հայաստանի Հանրապետության Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի համար

© Էկոլայն Ինթերնեյշնլ ՍՊԸ, 2023

Բոլոր իրավունքները պահպանված են:  
Սույն փաստաթղթի ամբողջական կամ մասնակի օգտագործումը կարող է կատարվել միայն հղում անելով սկզբնաղբյուրին:

## ՓԱՏԱՂԹԹԻ ՄՇԱԿՈՒՄԸ ԵՎ ԹՈՂԱՐԿՈՒՄԸ

Տարբերակ	Մշակված է	Ստուգված է	Հրապարակված է	Հրապարակման ամսաթիվը	Նկարագիրը
1	ՇՄՍԱԳ խորհրդատուի փորձագետների խումբ	Կլեր Փենի Շոն Օ Բեյրն	Մայա Գաչեչիլադե-Բոժեսկու	13.06.2023	Պատվիրատուի և վարկատուների վերանայման տարբերակ
2	(ներկայացված է Հատոր 1-ում)՝ Կլեր Փենիի օժանդակությամբ	Մայա Գաչեչիլադե-Բոժեսկու		12.07.2023	Վերջնական տարբերակ վարկատուների և պատվիրատուի հաստատման, հայերեն թարգմանության և հրապարակման համար

### ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏՈՒՄԸ

Շրջակա Միջավայրի վրա և Սոցիալական Ազդեցության Գնահատումը (ՇՄՍԱԳ) հիմնված է կանխատեսումների վրա, քանի որ այն ավարտվում է նախքան գնահատման ենթակա հանդիսացող ծրագրի իրականացումը: Տեղեկատվությունը, որի վրա հիմնված է գնահատումը, ստացվում է բազմաթիվ աղբյուրներից, ներառյալ տեխնիկատնտեսական հիմնավորումը, մանրամասն նախագծային փաստաթուղթը, ուսումնասիրությունների հաշվետվությունները, որոնք իրականացվել են տեխնիկատնտեսական հիմնավորման շրջանակներում, հանդիպումների գրառումները, այլ հրապարակումները, տարբեր տվյալների բազաները, ինչպես նաև ՇՄՍԱԳ խմբի կողմից հավաքագրված նյութերը: Չափազանց դժվար է հաստատել այն տեղեկատվությունը, որն անտրամաբանական է: Սույն փաստաթղթի մշակման ընթացքում մեծ աշխատանք է կատարվել ապահովելու համար, որ առկա բոլոր տեղեկությունները ճշգրտորեն վերարտադրվեն ՇՄՍԱԳ-ում: Եթե սույն փաստաթղթում առկա է տեղեկատվություն, որը սխալ է, խնդրում ենք դրա վերաբերյալ մեկնաբանություններ կատարվեն, որի հիման վրա կթարմացվի ՇՄՍԱԳ-ը: Մենք պատասխանատվություն չենք կրում այն տեղեկատվության համար, որը մենք բարեխղճորեն ընդունել և օգտագործել ենք՝ չիմանալով, որ այդ թերի կամ սխալ է: Յուրաքանչյուր ոք, ով վերարտադրում է այս ՇՄՍԱԳ-ում առկա տեղեկատվությունը, դա անում է բացառապես իր ռիսկով:

## ՀԱՊԱԿՈՒՄՆԵՐ

AASHTO (ՊՍՏՊԱԱ)	Պետական Մայրուղիների և Տրանսպորտի Պաշտոնյաների Ամերիկյան Ասոցիացիա
ԱԶԲ	Ասիական Չարգացման Բանկ
ԿՄՊ	Կենսաբազմազանության Միջոցառումների Պլան
ՎՉԵԲ	Վերակառուցման և Չարգացման Եվրոպական Բանկ
ԲԱԱԱ	Բնապահպանական, Աշխատանքի Անվտանգության և Առողջության Պահպանության
ՇՄԱԳ	Շրջակա Միջավայրի վրա Ազդեցության Գնահատում
ԵՆԲ	Եվրոպական Ներդրումային Բանկ
ԲԱՍ	Բնապահպանական և Սոցիալական
ԲՍՄՊ	Բնապահպանական և Սոցիալական Միջոցառումների Պլան
ՇՄՍԱԳ	Շրջակա Միջավայրի վրա և Սոցիալական Ազդեցություն Գնահատում
ԲՍԿՊ	Բնապահպանական և Սոցիալական Կառավարման Պլան
ԲՍԿՅ	Բնապահպանական և Սոցիալական Կառավարման Համակարգ
ԲՍՍ	Բնապահպանական և Սոցիալական Ստանդարտներ (ԵՆԲ-ի)
ՈՆՄԺ	Ոչ Նյութական Մշակութային Ժառանգություն
ISO (ՍՄԿ)	Ստանդարտացման Միջազգային Կազմակերպություն
ՀՀՃՍ	Հյուսիս-Հարավ Ճանապարհային Միջանցք
ՈՏԱ	Ոչ-Տեխնիկական Ամփոփագիր
ԱԱ	Աշխատանքի Անվտանգություն
ԻՊ	Իրագործման Պահանջներ (ՎՉԵԲ-ի)
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՃԴ	"Ճանապարհային Դեպարտամենտ" Հիմնադրամ
ՀՀՏՎ	Հողային Հանույթի Տեղադրման Վայր
ՇՆՊ	Շահառուների Ներգրավվածության Պլան
Ս-Ք	Սիսիան-Քաջարան (ճանապարհ)

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

**Նախաբան ..... 6**

**1       Նպատակը եվ շրջանակը..... 7**

**2       Ծրագրի նկարագիրը ..... 10**

**3       Դերերը եվ պատասճանատվությունը ..... 13**

    3.1   Ճանապարհային Դեպարտամենտ ..... 13

    3.2   Վերահսկող ճարտարագետ ..... 13

    3.3   Շինարարության կապալառու..... 14

    3.4   Վարկատուներ..... 14

    3.5   ԾԻԳ Խորհրդատու ..... 14

**4       Բնապահպանական եվ սոցիալական կառավարման մոտեցումը..... 15**

    4.1   Բնապահպանական և սոցիալական քաղաքականություն ..... 15

    4.2   Պլանավորումը..... 16

    4.3   Իրականացում և շահագործում..... 56

    4.4   Ստուգումը և ուղղիչ գործողությունը..... 59

    4.5   Դեկավարության վերլուծություն ..... 78

    4.6   Մոտավոր ծախսերի գնահատումները ..... 79

**Հավելված 1.   գեոլտանգների ռիսկերի վերլուծությունը..... 82**

**Հավելված 2.   Ջրի որակի հարաչափերը գետավազանների համար սահմանված դասերի համաձայն ..... 86**

**Հավելված 3.   Ազդակիր բնակավայրերում իրականացված հարցազրույցների եվ խորհրդատվությունների արդյունքում առաջարկված տնային կենդանիների լրացուցիչ անցուղիների տեղադիրքերը ..... 89**

**Հավելված 4.   Ազդակիր բնակավայրերում իրականացված հարցազրույցների եվ խորհրդատվությունների արդյունքում առաջարկված հետիոտնային անցուղիների տեղադիրքերը ..... 92**

**Հավելված 5.   վայրի կենդանիների համար առաջարկվող անցուղիների տեղադիրքերը ..... 94**

**Հավելված 6.   ՄԺ հատուկ մեղմացնող միջոցառումներ, գնահատված բյուջե եվ ժամանակացույց ..... 96**

**ԱՂՅՈՒՄԱԿՆԵՐԻ ԵՎ ՆՎԱՐՆԵՐԻ ՑԱՆԿ**

Աղյուսակ 1. Կիրառելի ՀՀ օրենսդրական պահանջները..... 16

Աղյուսակ 2. ԲևՍ ոլորտում կիրառելի միջազգային կոնվենցիաները և համաձայնագրերը .. 18

Աղյուսակ 3. Ծրագրի կողմից ընդունված բնապահպանական սահմանային արժեքները..... 21

Աղյուսակ 4. Բնապահպանական և սոցիալական մեղմացում/վերահսկում և բարելավում .. 24

Աղյուսակ 5. Շինարարության փուլի մշտադիտարկումը ..... 60

Աղյուսակ 6. Շահագործման փուլի մշտադիտարկումը ..... 68

Աղյուսակ 7. Ծրագրի ԲևՍ հաշվետվությունների պահանջները..... 75

Աղյուսակ 8. Կապալառուի գործիքային մոնիտորինգի ծախսերի մոտավոր գնահատում..... 80



Նկար 1. Սիսիան-Քաջարան ճանապարհահատվածի ծրագրի ԲևՍ կառավարման մոտեցման սխեմատիկ պատկերը ..... 9

Նկար 2. Ծրագրի տեղադիրքը..... 11

Նկար 3. Առաջարկվող Սիսիան-քաջարան ճանապարհի ուղեծիրը..... 12

## ՆԱԽԱԲԱՆ

Սույն փաստաթուղթը՝ Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի առաջարկվող գրոյից կառուցվող Սիսիան-Զազարան ճանապարհային հատվածի Բնապահպանական և Սոցիալական Կառավարման Պլանն է: Այն կազմում է Ծրագրի Շրջակա Միջավայրի վրա և Սոցիալական Ազդեցության Գնահատման (ՇՄՍԱԳ) հաշվետվության **Հատոր 6**-ը:

ՇՄՍԱԳ հաշվետվությունը բաղկացած է համապատասխան հավելվածներով յոթ հատորներից՝

- Հատոր 1 - Ծրագրի սահմանումը, ներառյալ Ծրագրի ներկայացումը, ենթատեքստը և հիմնավորումը, Ծրագրի նկարագիրը, այլընտրանքները, իրավական շրջանակը և ՇՄՍԱԳ մեթոդակարգը,
- Հատոր 2 - Կենսաբազմազանությունը, ներառյալ ելակետային վիճակի վերլուծությունը, ռիսկերը/ազդեցությունների գնահատումը և մեղմացումը,
- Հատոր 3 - Ֆիզիկական միջավայրը, ներառյալ օդի որակի ու կլիմայի, աղմուկի ու թրթռման, լադնշաֆտի և այլնի ելակետային իրավիճակը, ռիսկերը/ազդեցությունների գնահատումը և մեղմացումը,
- Հատոր 4 - Սոցիալական միջավայրը, ներառյալ սոցիալ-տնտեսական, գեոդերային և պատմամշակութային ելակետային իրավիճակը, ռիսկերը/ազդեցությունների գնահատումը և մեղմացումը,
- Հատոր 5 - Գումարային ազդեցության գնահատումը,
- **Հատոր 6 - Բնապահպանական և Սոցիալական Կառավարման Պլանը (ԲՍԿՊ),**
- Հատոր 7 - Եզրակացությունները և առաջարկությունները:

ՇՄՍԱԳ-ը ենթակա է հրապարակման նվազագույնը 120 օրվա ընթացքում միջազգային վարկատուների պահանջներին համապատասխան: Ի լրումն ՇՄՍԱԳ հաշվետվության, հրապարակման փաթեթը ներառում է՝

- Ոչ Տեխնիկական Ամփոփագիր (ՈՏԱ), որը ՇՄՍԱԳ-ի արդյունքները ոչ տեխնիկական լեզվով հակիրճ և համապարփակ ներկայացնող փաստաթուղթ է,
- Շահառուների Ներգրավման Պլան (ՇՆՊ), որն ուղղորդում է տեղեկատվության հրապարակումը և Ծրագրի շահագրգիռ կողմերի հետ բովանդակային ներգրավվածությունը, ինչպես նաև բողոքարկման մեխանիզմը,
- Տարաբնակեցման Շրջանակ (ՏՇ), որն ուղղորդում է Ծրագրի հետևանքով ֆիզիկական և տնտեսական տեղաշարժի, հողի ձեռքբերման, փոխհատուցումների և ապրուստի միջոցների վերականգնման հետ կապված հարցերը,
- Կենսաբազմազանության Գործողությունների Պլան (ԿԳՊ), որը հստակեցնում է այն գործողությունները, որոնք կարող են օգնել ապահովել հատուկ պահպանման արժեք համարվող պոտենցիալ ազդեցության ենթարկված կենսամիջավայրերի և տեսակների պահպանումը կամ բարելավումը,
- Բնապահպանական և Սոցիալական Միջոցառումների Պլան (ԲՍՄՊ), որը պարունակում է Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ գործողություններ՝ միջազգային վարկատուների պահանջներին համապատասխան:

**Սույն հատորում բերված բոլոր քարտեզները և սխեմաները մշակված են խորհրդատուի կողմից, եթե այլ բան նշված չէ:**



# 1 ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՇՐՋԱՆԱԿԸ

Սույն ԲՍԿՊ-ի նպատակն է՝

- Տրամադրել Ծրագրի համար կիրառելի Բնապահպանական և Սոցիալական (ԲևՍ) քաղաքականության և օրենսդրական դաշտի ընդհանուր նկարագրություն:
- Ապահովել, որ համապատասխան Վարկատուների ԲևՍ քաղաքականության պահանջները բավարարված են:
- Նախանշել կազմակերպչական կառուցվածքը և հիմնական դերերն ու պատասխանատվությունը, որոնք կապված են ԲևՍ կառավարման հետ:
- Փաստաթղթավորել, թե ինչպես են կառավարվելու ՇՄԱԳ և ՇՄՍԱԳ գործընթացների արդյունքում նույնականացված ԲևՍ ռիսկերն ու ազդեցությունները: Կառավարումը ենթադրում է խուսափել կամ սահմանափակել բացասական ազդեցությունները, ինչպես նաև առավելագույնի հասցնել Ծրագրի դրական ազդեցությունները (օգուտները):
- Սահմանել ԲևՍ մշտադիտարկման և հաշվետվողականության պահանջները:

Սույն ԲՍԿՊ-ի շրջանակը ներառում է Ծրագրի և՛ շինարարական, և՛ շահագործման փուլերը: Հետևաբար, Պլանը կկիրառվի բոլոր Կապալառուների և ենթակապալառուների և ճանապարհային դեպարտամենտի (ՃԴ) նկատմամբ, որոնք ներգրավված են Ծրագրի բոլոր բաղադրիչների շինարարության, շահագործման և պահպանման գործընթացում, ներառյալ.

- Ճանապարհն ինքը՝ ներառյալ հատումները, շեպերը, հենապատերը, հեղեղատարները և այլն,
- Թունելները,
- Կամուրջները,
- Քարհանքերը և ազակոպճային հանքերը,
- Անֆալտի գործարանը,
- Բետոնի գործարանը,
- Շինարարական ճամբարը(ները),
- Կապալառուի զբաղեցրաց այլ տարածքերը:

Սույն ԲՍԿՊ-ի մշակումը համահունչ է ISO 14001:2015 ստանդարտի պահանջներին, որոնք սահմանված են Ստանդարտացման Միջազգային Կազմակերպության (ISO) կողմից բնապահպանական կառավարման համակարգերի համար: ISO14001-ը միջազգայնորեն ճանաչված ստանդարտ է՝ բնապահպանական պարտավորությունները համակարգված կերպով կառավարելու և բնապահպանական արդյունավետությանը հասնելու համար: Որպես այդպիսին, այս ԲՍԿՊ-ն նպատակ ունի հասնել կառավարման այնպիսի մոտեցման, որը կլինի կայուն, արդյունավետ ու հարմարվող և կարտացոլի կառավարման համակարգերի ստանդարտի հետևյալ բաղադրիչները, ինչպես սխեմատիկորեն պատկերված է



Նկար 1-ում (անգլերեն): Այն բաղկացած է՝

1. Բնապահպանական և սոցիալական քաղաքականությունից,
2. Պլանավորումից,
3. Ներդրումից և իրագործումից,
4. Ստուգումից և ուղղիչ գործողություններից, և
5. Ղեկավարության վերլուծությունից:



## 2 ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ


Հայաստանի Հանրապետությունում (ՀՀ) Միսիան-Քաջարան ճանապարհի ծրագիրը ներառում է նոր ճանապարհի կառուցում, մոտ 60 կմ երկարությամբ, նախագծային 100 կմ/ժ արագությամբ և բաղկացած է. 27 կամուրջներից (60մ-ից մինչև 560մ երկարությամբ, որոնք հատում են գետերն ու հովիտները), 9 թունելներից, ներառյալ 8600մ երկարությամբ Բարգուշատի թունելը և երեք հիմնական խաչմերուկներից, որոնք միացնում են նոր ճանապարհը (հյուսիսային և հարավային եզրերը) գոյություն ունեցող Ս2 մայրուղու, ինչպես նաև կապում են Շամբի ջրամբարի շուրջ գոյություն ունեցող ճանապարհների հետ: Գոյություն ունեցող ճանապարհի անվանական լայնությունը մոտ 16 մ է:

Նոր ճանապարհը, հանդիսանալով Հյուսիս-Հարավ ճանապարհային Միջանցքի մաս, նախատեսված է այլընտրանքային երթուղի ապահովել Միսիան և Քաջարան քաղաքների միջև և կարևոր նշանակություն ունի երկրի ներսում կապի ապահովման և սոցիալ-տնտեսական զարգացման խթանման համար: Ծրագիրն առաջարկում է փոխարինում երկու գոյություն ունեցող երթուղու տարբերակների. Ս2 Գորիս-Կապան ճանապարհը, որը չի կարող օգտագործվել հայկական համարանիշներով մեքենաների համար, և Հ-45 Տաթևով անցնող ճանապարհը, որն ունի զառիթափ թեքություններ, խիստ ոլորաններ և ծանրաբեռնված է ծանր բեռնատար մեքենաներով, որոնց համար նախատեսված չէ: Նոր ճանապարհը կապահովի ուղիղ երթուղի Միսիանի և Քաջարանի միջև և կհամապատասխանի ճանապարհային անվտանգության միջազգային չափանիշներին:



Ծրագրի գտնվելու վայրը ներկայացված է **Նկար 2**-ում և Ծրագրի երթուղու ավելի մանրամասն ակնարկը՝ **Նկար 3**-ում:





Աղբյուրը՝ Միսիան-Քազարան հատված, Մանրամասն աշխատանքային նախագիծ, Գլխավոր հաշվետվության, 2019թ. ապրիլ

**Նկար 3. Առաջարկվող Միսիան-քազարան ճանապարհի ուղեծիրը**

### 3 ԴԵՐԵՐԸ ԵՎ ՊԱՏԱՍԾԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

#### 3.1 Ճանապարհային Դեպարտամենտ

Հայկական ՃԴ-ը Ծրագրի իրականացնող մարմինն է, որն ընդհանուր պատասխանատվություն է կրում Ծրագրի և այս ԲՍԿՊ-ի իրականացման համար: ԾԴ-ը պատասխանատու է Հայաստանի բոլոր ԲևՍ օրենսդրական պահանջներին համապատասխանությունն ապահովելու և ՇՄՍԱԳ հաշվետվությամբ ստանձնած պարտավորությունները կատարելու համար: Թեև ԲՍԿՊ-ի պահանջներից շատերը պետք է կատարվեն Շինարարության Կապալառուի (և ենթակապալառուների) կողմից, ՃԴ-ը կպահպանի ընդհանուր պատասխանատվությունը Ծրագրի ԲևՍ կատարման համար: ԾԴ-ը նաև պատասխանատվություն է կրում Շահառուների ներգրավվածության պլանի, Կենսաբազմազանության միջոցառումների պլանի, Մշակութային ժառանգության կառավարման պլանի և Տարաբնակեցման պլանի, ինչպես նաև շահագործման փուլի համար անհրաժեշտ ԲևՍ կառավարման պլանների մշակման համար:

ԾԴ-ն ունի սոցիալական և շրջակա միջավայրի վրա ազդեցությունների կառավարման գրասենյակ (Ծրագրերի կառավարման և գնումների վարչության կազմում): Սա ներառում է և Սոցիալական ազդեցությունների և տարաբնակեցման կառավարման բաժինը, ներառյալ՝ սոցիալական բաժնի ղեկավարը և երկու սոցիալական մասնագետ, և շրջակա միջավայրի վրա ազդեցության կառավարման բաժինը, ներառյալ երկու մասնագետ, ովքեր պատասխանատու են ԲԱԱԱ առնչվող Ծրագրի պարտավորությունների կատարման և վերահսկողության համար:

#### 3.2 Վերահսկող ճարտարագետ

Վերահսկող ճարտարագետը կնշանակվի ՃԴ-ի կողմից՝ վերահսկելու Ծրագրի իրականացումը շինարարության փուլում և ապահովելու ԲՍԿՊ-ի և Ծրագրի շինարարության ԲևՍ կառավարման այլ պլանների և ընթացակարգերի պահանջներին համապատասխանությունը: Սա ներառում է մշտադիտարկման ծրագրի մշակում և իրականացում, գրառումների պահպանում և հաշվետվություն ՃԴ-ին կապալառուի ԲևՍ արդյունավետության վերաբերյալ, ներառյալ նույնականացված անհամապատասխանությունները և համապատասխան ուղղիչ գործողությունները՝ սահմանված ժամկետներով, դերերով և պարտականություններով: Վերահսկիչ ճարտարագետը անհրաժեշտության դեպքում կիրականացնի կարողությունների զարգացման գործողություններ Կապալառուի ԲևՍ թիմի համար:

Վերահսկող ճարտարագետից կպահանջվի նշանակել համապատասխան որակավորում ունեցող և փորձառու ԲԱԱԱ անձանց հետևյալ հատուկ հաստիքներով՝

- Աշխատանքային առողջության և անվտանգության գծով միջազգային մասնագետ,
- Բնապահպանության գծով միջազգային մասնագետ,
- Աշխատանքի և համայնքի առողջության և անվտանգության գծով տեղական մասնագետ,
- Բնապահպանության գծով տեղական մասնագետ,
- Սոցիալական (ներառյալ գենդերային) և տարաբնակեցման գծով տեղական մասնագետ,
- Տեղական հնագետ (ՇՄՍԱԳ-ում նշված է որպես «Մշակութային ժառանգության մշտադիտարկող»<sup>2</sup>),

<sup>2</sup> Մշակութային ժառանգության մշտադիտարկողը Վերահսկող ճարտարագետի թիմում պատասխանատու կլինի Կապալառուի Մշակութային ժառանգության աշխատակազմի/ենթակապալառուի կողմից Մշակութային

- Կենսաբազմազանության մասնագետ միջազգային փորձով / վարկատուների պահանջների իմացությամբ և փորձով:

**3.3 Շինարարության կապալառու**

Շինարարության կապալառուն (ընտրվելու է ճՂ-ի մրցույթի միջոցով) ընդհանուր պատասխանատվություն է կրում Ծրագրի շինարարության համար: Կապալառուն պետք է լիովին համապատասխանի սույն ԲՍԿՊ-ի և ճՂ-ի կառավարման պլանների պահանջներին: Սա կներառի **Բաժին 4.2.4**-ում ուրվագծված շինարարության փուլի ԲևՍ կառավարման պլանների մշակումը և երաշխավորելը, որ այդ պլաններում նշված բոլոր ԲևՍ կառավարման և մեղմացման միջոցառումներն արդյունավետորեն կիրականացվեն շինարարական գործունեության ընթացքում: Կապալառուն նաև պատասխանատու է ապահովելու ենթակապալառուների համապատասխանությունը Ծրագրի բոլոր ԲևՍ կառավարման պլանների և ընթացակարգերի պահանջներին:

Շինարարության կապալառուից կպահանջվի նշանակել համապատասխան որակավորում ունեցող և փորձառու անձանց հետևյալ հատուկ ԲԱԱԱ դերերում՝

- Ծրագրի ղեկավար,
- Բնապահպանության գծով մասնագետ,
- Աշխատանքի և համայնքային առողջության և անվտանգության գծով մասնագետ (ներ),
- Սոցիալական անվտանգության և տարաբնակեցման գծով մասնագետ,
- Մշակութային ժառանգության գծով մասնագետ<sup>3</sup>,
- Կենսաբազմազանության մասնագետ միջազգային փորձով / վարկատուների պահանջների իմացությամբ և փորձով:

**3.4 Վարկատուներ**

Ծրագրի Վարկատուները (ՎՉԵԲ՝ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը, ԵՆԲ՝ Եվրոպական ներդրումային բանկի և ԱՉԲ՝ Ասիական զարգացման բանկը) կվերահսկեն Ծրագրի ԲևՍ արդյունավետությունը ապահովելու իրենց ԲևՍ քաղաքականությունների պահանջներին համապատասխանությունը:

**3.5 ԾԻԳ Խորհրդատու**

ԾԻԳ-ի խորհրդատուն, ի թիվս այլոց՝ կօժանդակի ճՂ-ին ԲՍԿՊ-ում և ԲՍՄՊ-ում պահանջվող միջոցառումների իրականացման հարցում, անհրաժեշտության դեպքում կանցկացնի ուսուցում ճՂ-ի և Ծրագրի իրագործման մեջ ներառված կապալառուների անձնակազմի հետ, դրանց ԲևՍ կառավարման կարողությունները լավարկելու նպատակով, կվերանայի հատուկ / թեմատիկ ԲՍԿՊ-ները, կաջակցի ճՂ-ին մշակելու և ինտեգրելու ԲՍՄՊ-ով, ՏՊ-ով, ՇՆՊ-ով, ՄԺԿՊ-ով և այլ կառավարման պլաններով պահանջվող քաղաքականությունները, պլանները, ընթացակարգերը և մեղմացման միջոցառումները ընդհանուր կառավարման համակարգում և բյուջեի հաստատման ընթացակարգերում, եթե անհրաժեշտ է:

Ժառանգության կառավարման պլանի իրականացման մշտադիտարկման և վերահսկման համար և կապահովի մշակութային ժառանգության հարցերի վերաբերյալ հաշվետվությունների անկախությունն ու օբյեկտիվությունը:

<sup>3</sup> Անձնակազմի խնդիրները ներառում են աշխատողների համար հրահանգավորում / ուսուցումներ, հաշվետվողականության պահանջներ, պատահական գտածոների մատյանների պահպանում և այլն:



## 4 ԲՆԱԴԱՐՉՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄԸ

### 4.1 Բնապահպանական և սոցիալական քաղաքականություն

#### 4.1.1 Ճանապարհային դեպարտամենտի բնապահպանական և սոցիալական քաղաքականությունը

Ներկայումս ՃԴ-ը կազմակերպչական մակարդակում չունի ԲևՍ քաղաքականություն և ԲՍԿՅ: Վարկատուների կողմից ֆինանսավորվող ծրագրերն իրականացնելիս ՃԴ-ը հենվում է ծրագրին հատուկ ԲևՍ կառավարման շրջանակների և համակարգերի վրա, որոնք մշակվել և իրականացվել են իրենց կապալառուների կողմից (ներառյալ շինարարության և սպասարկման կապալառուները):

#### 4.1.2 Ծրագրի բնապահպանական և սոցիալական քաղաքականությունը

Միսիան-Քաջարան ճանապարհի ծրագիրն իրականացնելիս Ճանապարհային դեպարտամենտը պարտավորվում է կատարել հետևյալը.

- Կենտրոնանալ ոչ միայն տեխնիկական տարրերի վրա, այլ նաև ծրագրի համար պահանջվող գործունեությունների ԲևՍ կայունության և այն տարածքի վրա, որտեղ կծավալվի ծրագիրը,
- Ապահովել, որ ծրագրի համար պահանջվող գործողությունները չեն հանգեցնի շրջակա միջավայրի դեգրադացման կամ բացասական ազդեցությունների այն մարդկանց վրա, ովքեր կարող են ուղղակիորեն ազդվել ճանապարհի նախագծից, հատկապես աղքատ և խոցելի խավերի վրա՝ ապահովելով, որ նման համայնքները պաշտպանված են նախագծից բխող հնարավոր բացասական ազդեցությունից,
- Ձգտել առավելագույնի հասցնել ծրագրի մարդկային զարգացման ազդեցությունը՝ հատուկ ուշադրություն դարձնելով կանանց հզորացմանը՝ առավելագույնի հասցնելով ճանապարհի երկու կողմերում ապրող տեղացիների զբաղվածությունը,
- Գիտակցել ցածր ածխածնային գործունեության և մաքուր էներգիայի խթանման կարևորությունը,
- Շահագրգիռ կողմերի ակտիվ ներգրավվածությունը դիտել որպես կարևոր գործիք՝ հասկանալու համար, թե ինչպես կանխել բացասական հետևանքները և ընդլայնել ծրագրի գործունեության հետ կապված օգուտները: Նաև հավատալով մարդկանց իրավունքներին՝ պատշաճ կերպով տեղեկացված լինելու ծրագրի գործունեության բնույթի վերաբերյալ,
- Հատկացնել ռեսուրսներ (ԲևՍ աշխատակազմ) և բյուջե ԲՍԿՅ-ն և ԲՍԿԴ-ն արդյունավետորեն իրականացնելու համար,
- Հասցնել քաղաքականությունը կազմակերպության բոլոր մակարդակներին,
- Ապահովել ներքին և բոլոր կապալառուների և ենթակապալառուների միջև լավ կառավարումը:

Ճանապարհային դեպարտամենտը պետք է համապատասխանի Վարկատուների պահանջներին և այդ նպատակով պարտավոր է՝

- Ծանոթ լինել ԲևՍ ռիսկերի հետ, որոնք կարող են կապված լինել ծրագրի գործունեության հետ,
- Մշակել և արդյունավետ իրականացնել բոլոր հնարավոր ազդեցությունների համար համապատասխան մեղմացման միջոցառումները,
- Սահմանել և իրականացնել նպատակներ, թիրախներ և ցուցանիշներ, որոնք կծառայեն ԲևՍ կառավարման գործունեության արդյունավետության ձևավորմանը և ուղղորդմանը,



- Նվազագույնի հասցնել ջրի և էներգիայի օգտագործումը և առավելագույնի հասցնել դրա արդյունավետությունը,
- Կանխարգելել շրջակա միջավայրի աղտոտումը և նվազագույնի հասցնել թափոնների քանակը,
- Ապահովել թափոնների անվտանգ հեռացումը, որոնք այլ կերպ չեն կարող վերաօգտագործվել կամ վերամշակվել,
- Պահպանել ԲևՍ կառավարման արդյունավետությունը և հաշվետվողականության ընթացակարգը,
- Պարտավորվել հետևել գործող օրենքներին, կանոնակարգերին և Վարկատուների ԲևՍ պահանջներին:

**4.2 Պլանավորումը**

**4.2.1 Իրավանորմատիվային շրջանակ**

Ծրագիրը պետք է համապատասխանի հետևյալ պահանջներին՝

- Կիրառելի ազգային ԲևՍ օրենսդրությանը և կարգավորումներին,
- ՀՀ կողմից վավերացված կիրառելի միջազգային համաձայնագրեր,
- Կիրառելի ԵՄ օրենսդրությունը:

**Աղյուսակ 1**-ում ներկայացված են Ծրագրի ՀՀ օրենսդրական դաշտը և համապատասխան օրենքներից կիրառելի դրույթները:

**Աղյուսակ 1. Կիրառելի ՀՀ օրենսդրական պահանջները**

Իրավական ակտեր	Կիրառելիությունը
<b>Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին ՀՀ օրենք (2014թ., վերանայվել է 2023թ.-ին)</b>	Սահմանում է գործունեության տեսակները, ըստ դրանց ակնկալվող շրջակա միջավայրի վրա ազդեցության, որոնք պետք է ենթարկվեն շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:
<b>ՀՀ ջրային օրենսգիրք (2002)</b>	Հիմնական նպատակն է սահմանել երկրի ջրային ռեսուրսների պաշտպանության իրավական հիմքերը, ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով բավարարել քաղաքացիների և տնտեսական ոլորտների ջրային կարիքները և պահպանել ջրային ռեսուրսները ապագա սերունդների համար:
<b>ՀՀ հողային օրենսգիրք (2001)</b>	Սահմանում է ՀՀ-ում հողօգտագործման հիմնական դրույթները: Նաև սահմանում է հողի պահպանման սկզբունքները, նպատակները և կարգավորումները:
<b>Հողի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին ՀՀ օրենք (2008)</b>	Սահմանվում են հողերի արդյունավետ օգտագործման և պահպանման, հողային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման խնդիրները, ձևերը, վերահսկողություն իրականացնող մարմինները, ստուգող և ստուգվող անձանց իրավունքներն ու պարտականությունները, ստուգումների իրականացման կարգերը: Օրենքը տարածվում է ՀՀ հողային ֆոնդի բոլոր հողերի վրա՝ անկախ նպատակից, սեփականությունից և/կամ օգտագործման իրավունքից:
<b>Թափոնների մասին ՀՀ օրենք (2004)</b>	Սահմանում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման իրավական և տնտեսական հիմքերը: Այն սահմանում է պետական մարմինների, ինչպես նաև թափոնազոյացնող կազմակերպությունների պարտականությունները և պատասխանատվությունը թափոնների կառավարման ոլորտում:
<b>Հանրության գերակա շահի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին ՀՀ օրենք (2006)</b>	Սահմանում է գերակա հանրային շահի որոշման, հանրային շահի ապահովման նպատակով սեփականության օտարման և օտարված գույքի փոխհատուցման ընթացակարգերը:

Իրավական ակտեր	Կիրառելիությունը
<b>Մթնոլորտային օդի պահպանության մասին ՀՀ օրենք (1994)</b>	Կարգավորում է մթնոլորտային օդի մաքրության ապահովման, մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների նվազեցման ու կանխման բնագավառում հասարակական հարաբերությունների հարցերը:
<b>Քուսական աշխարհի մասին (1999թ.) և Կենդանական աշխարհի մասին (2000թ.) ՀՀ օրենքներ</b>	Սահմանում են ՀՀ բույսերի և կենդանիների պահպանության, պաշտպանության, օգտագործման, վերարտադրության ու կառավարման, ինչպես նաև կենսաբազմազանության վրա մարդկանց գործունեության ազդեցությունը կարգավորելու քաղաքականությունը: Այս օրենքների հիմնականատակը բուսական/կենդանական աշխարհի և կենսաբազմազանության պահպանության ապահովումն է: Այն նաև սահմանում է տեսակների՝ մասնավորապես Էնդեմիկ և վտանգված, մոնիտորինգի և գնահատման ընթացակարգերը:
<b>Քնության հատուկ պահպանվող տարածքների մասին ՀՀ օրենք (2006)</b>	Կարգավորում է ՀՀ քնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող Էկոհամակարգերի, քնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն գարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները:
<b>Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին ՀՀ օրենք (1998)</b>	Ապահովում է Հայաստանում հուշարձանների պահպանության և օգտագործման իրավական և քաղաքական հիմքերը: Օրենքի 15-րդ հոդվածը նկարագրում է հուշարձանների հայտնաբերման և գրանցման, դրանց շուրջ պահպանական գոտիներ ստեղծելու և պատմամշակութային արգելոցներ ստեղծելու ընթացակարգերը: Հոդված 22-ը սահմանում է, որ հուշարձաններ ներառող հողատարածքները կարող են տրամադրվել շինարարական, գյուղատնտեսական և այլ գործունեության համար փայլ լիազորված պետական մարմնի (Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության վարչություն) թույլտվությամբ: Պատմամշակութային հուշարձանների կառավարմամբ զբաղվող պետական մարմինների դերերն ու պարտականությունները սահմանված են ՀՀ կառավարության 20.04.2002թ.-ի №438-Ն/4 որոշմամբ հաստատված պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգով:
<b>Ոչ նյութական մշակութային ժառանգության մասին ՀՀ օրենք (2009)</b>	Կարգավորում է ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության գործընթացների ընթացքում ծագող իրավահարաբերությունները՝ ներառյալ ոչ նյութական մշակութային արժեքների գույքագրման, ցանկերի պատրաստման, նույնականացման, փաստաթղթավորման, հետազոտման, կիրառման, վերականգնման գործընթացները, այդ արժեքների նկատմամբ սեփականության իրավունքի պաշտպանությունը, ՀՀ մշակութային ժառանգության պահպանման, միջազգային մշակութային համագործակցության, ՀՀ և այլ պետությունների ժողովուրդների մշակութային հաղորդակցման խնդիրները, սահմանում է այդ ոլորտում ֆինդիկական ու իրավաբանական անձանց իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև պետական մարմինների իրավասությունները:
<b>Ընդերքի մասին օրենսգիրքը (2011)<sup>5</sup></b>	Սահմանում է հանքային ռեսուրսների և ստորգետնյա ջրերի, ներառյալ ստորգետնյա ջրային ռեսուրսների ասնիտարական պահպանության գոտիների հիմնական դրույթները:
<b>Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին ՀՀ օրենք (2005)</b>	Կարգավորում է ՀՀ ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառում առաջացող հարաբերությունները, սահմանում է ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառի պետական քաղաքականության սկզբունքները և ուղղությունները, ճանապարհային երթևեկության կազմակերպման և անվտանգության ապահովման իրավական հիմքերը:

<sup>4</sup><https://www.arlis.am/documentview.aspx?docid=137204>

<sup>5</sup><https://www.arlis.am/documentview.aspx?docid=146898> <https://www.arlis.am/documentview.aspx?docid=146898>



Իրավական ակտեր	Կիրառելիությունը
<b>ՀՀ անտառային օրենսգիրք (2005)</b>	Կարգավորում է Հայաստանի Հանրապետության անտառների և անտառային հողերի կայուն կառավարման՝ պահպանության, պաշտպանության, վերականգնման, անտառապատման և արդյունավետ օգտագործման, ինչպես նաև անտառների հաշվառման, մշտադիտարկման, վերահսկողության և անտառային հողերի հետ կապված հարաբերությունները:
<b>Բնապահպանական վերահսկողության մասին ՀՀ օրենք (2005)</b>	Կարգավորում է ազգային բնապահպանական օրենսդրության վերահսկման կազմակերպումն ու կիրարկումը և սահմանում է իրավական և տնտեսական հիմքերը, որոնց հիմքում ընկած են բնապահպանական պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունները և կողմերի միջև հարաբերությունները:
<b>Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին ՀՀ օրենք (1992)</b>	Սահմանում է ՀՀ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման իրավական, տնտեսական և կազմակերպական հիմքերը, ինչպես նաև պետության կողմից նախատեսվող այն երաշխիքները, որոնք բացառում են մարդու օրգանիզմի վրա շրջակա միջավայրի վնասակար և վտանգավոր գործոնների ազդեցությունը և բարենպաստ պայմաններ ապահովում նրա և ապագա սերունդների կենսունակության համար:
<b>ՀՀ աշխատանքային օրենսգիրք (2004)</b>	Կարգավորում է կոլեկտիվ և անհատական աշխատանքային հարաբերությունները, սահմանում է այդ հարաբերությունների ծագման, փոփոխման և դադարման հիմքերն ու իրականացման կարգը, աշխատանքային հարաբերությունների կողմերի իրավունքներն ու պարտականությունները, պատասխանատվությունը, ինչպես նաև աշխատողների անվտանգության ապահովման ու առողջության պահպանման պայմանները:
<b>Հրդեհային անվտանգության մասին ՀՀ օրենք (2001)</b>	Կարգավորում է Հայաստանի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների/ ընկերությունների և մարդկանց հարաբերությունները հրդեհային անվտանգության ապահովման ոլորտում: Օրենքը լրացվում է ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2015թ.-ի №595-Ն հրամանով հաստատված կանոններով):

**Աղյուսակ 2-ում** ներկայացված են միջազգային կոնվենցիաները և արձանագրությունները, որոնք վավերացված են ՀՀ-ի կողմից և կիրառելի են Ծրագրի համար:

**Աղյուսակ 2. ԲևՍ ոլորտում կիրառելի միջազգային կոնվենցիաները և համաձայնագրերը**

Միջազգային կոնվենցիաներ և արձանագրություններ	Նկարագիրը
"Միջազգային կարևորության խոնավ տարածքների մասին, հատկապես որպես ջրաթռչունների բնակավայր" կոնվենցիա (Ռամսար 1971թ.)	Միջկառավարական համաձայնագիր է, որն իրավական հիմք է ստեղծում խոնավ տարածքների թռչունների բնադրավայրերի պահպանման միջազգային համագործակցության համար: Համաձայնագրում նշված է խոնավ տարածքների տնտեսական, գիտական և ռեկրեացիոն նշանակությունը, իսկ ջրի թռչունները ճանաչված են որպես միջազգային նշանակության պաշար: ՀՀ-ի կողմից վավերացվել է 1993թ.-ին:
"Համաշխարհային մշակութային և բնական ժառանգության պահպանության մասին" կոնվենցիա (Փարիզ, 1972թ.)	Համաշխարհային բնական և մշակութային ժառանգության պահպանության մասին կոնվենցիայի նպատակն է ստեղծել մշակութային և բնական ժառանգության կոլեկտիվ պահպանության արդյունավետ համակարգ: ՀՀ-ի կողմից վավերացվել է 1993թ.-ին:
"Միգրացվող վայրի կենդանիների տեսակների պահպանության մասին" կոնվենցիա (Բոնն, 1979թ.)	«Միգրացվող վայրի կենդանիների տեսակների պահպանության մասին» կոնվենցիան ուղղված է կենդանիների միգրացվող՝ ցամաքային և ջրային տեսակների և թռչունների պահպանմանը իրենց միգրացիայի տարածքում: Սա միջկառավարական պայմանագիր է, կնքված ՄԱԿ-ի բնապահպանական ծրագրի (ՅՈՒՆԵՊ) հովանու ներքո, որը զբաղվում է վայրի կենդանիների և դրանց կենսապայմանների պահպանմամբ՝ համաշխարհային մասշտաբով: ՀՀ-ի կողմից վավերացվել է 2010թ.-ին:
"Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական ու բուսական	Սահմանում է անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական ու բուսական աշխարհի տեսակների ներմուծման, արտահանման,



Միջազգային կոնվենցիաներ և արձանագրություններ	Նկարագիրը
աշխարհի տեսակների միջազգային առևտրի մասին" կոնվենցիա (Վաշինգտոն, 1973թ.)	վերաարտահանման և տեղաշարժման պայմանները և նպատակն է վերահսկել այդ տեսակների առևտուրը: Հավելվածներում ներկայացված են կոնվենցիայի շրջանակներում ներառված վտանգված տեսակները: ՀՀ-ի կողմից վավերացվել է 2008թ.-ին:
"Եվրոպայի կենդանական աշխարհի և բնական միջավայրի պահպանության մասին" կոնվենցիա (Բեռն, 1979թ.)	Բեռնի կոնվենցիան պարտադիր միջազգային իրավական փաստաթուղթ է բնության պահպանության ոլորտում, որն ընդգրկում է եվրոպական մայրցամաքի բնական ժառանգության մեծ մասը և տարածվում է Աֆրիկայի որոշ պետությունների վրա: ՀՀ-ի կողմից վավերացվել է 2008թ.-ին:
"Կենսաբանական բազմազանության մասին" կոնվենցիա (Ռիո դե Ժանեյրո, 1992թ.)	Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիան կայուն զարգացման սկզբունքներին հետևելու կարևորության ճանաչումն է միջազգային հանրության կողմից: Կոնվենցիայի գլխավոր նպատակն է կենսաբազմազանության պահպանումը, կենսաբազմազանության բաղադրիչների կայուն օգտագործումը, գենետիկ ռեսուրսների համատեղ օգտագործումը, ներառյալ գենետիկ ռեսուրսների և տեխնոլոգիաների ազատ մատչելիությունը, անհրաժեշտ միջոցների տրամադրումը: ՀՀ-ի կողմից վավերացվել է 1993թ.-ին:
Լանդշաֆտների եվրոպական կոնվենցիա (Ֆլորենսիա, 2000թ.)	Եվրոպայի խորհրդի լանդշաֆտների եվրոպական կոնվենցիան խթանում է լանդշաֆտների պահպանությունը, կառավարումը և պլանավորումը և կազմակերպում է միջազգային համագործակցություն լանդշաֆտային խնդիրների շուրջ:
ՄԱԿ-ի "Կլիմայի փոփոխության մասին" շրջանակային կոնվենցիա (Նյու Յորք, 1992թ.)	Կլիմայի փոփոխության կոնվենցիան սահմանում է կլիմայի փոփոխության հետևանքների դեմ ուղղված միջկառավարական ջանքերի համընդհանուր շրջանակ: Այն ընդունում է, որ կլիմայի կայունությունը միացյալ համակարգ է, որը կարող է վտանգվել ածխածնի երկօքսիդի և ջերմոցային այլ գազերի արտանետումներով: Կոնվենցիան ունի գրեթե համընդհանուր անդամակցություն. այն վավերացրել են թվով 191 երկրներ: ՀՀ-ի կողմից վավերացվել է 1993թ.-ին:
Փարիզյան համաձայնագիր՝ ՄԱԿ-ի "Կլիմայի փոփոխության մասին" շրջանակային կոնվենցիայի ներքո	Համաձայնագրի նպատակն է նվազեցնել գլոբալ տաքացումը հետևյալի միջոցով. ա) գլոբալ միջին ջերմաստիճանի բարձրացումը 2°C-ից շատ ցածր պահել նախաարդյունաբերական մակարդակից և ջանքեր գործադրել՝ սահմանափակելու ջերմաստիճանի բարձրացումը մինչև 1.5°C նախաարդյունաբերական մակարդակներից՝ գիտակցելով, որ դա զգալիորեն կնվազեցնի ռիսկերը և կլիմայի փոփոխության ազդեցությունը, բ) կլիմայի փոփոխության անբարենպաստ ազդեցություններին հարմարվելու ունակության բարձրացում և կլիմայի դիմացկունություն և ջերմոցային գազերի ցածր արտանետումների զարգացում այնպիսի ձևով, որը չի սպառնում սննդի արտադրությանը. գ) Ֆինանսական հոսքերի համապատասխանեցում ջերմոցային գազերի ցածր արտանետումների և կլիմայի նկատմամբ կայուն զարգացման ճանապարհին: Հայաստանի կողմից վավերացվել է 2017թ.-ին:
ՄԱԿ-ի անապատեցման դեմ պայքարի կոնվենցիա (Փարիզ, 1994թ.)	Սույն Կոնվենցիան միակ իրավաբանորեն պարտադիր միջազգային համաձայնագիրն է, որը կապում է շրջակա միջավայրը և զարգացումը հողի կայուն կառավարման հետ: Կոնվենցիան վերաբերում է հատկապես չոր, կիսաչոր և չոր ելթախոնավ տարածքներին, որոնք հայտնի են որպես չոր հողեր, որտեղ կարելի է գտնել ամենախոցելի Էկոհամակարգերից և ժողովուրդներից մի քանիսը: Հայաստանի կողմից վավերացվել է 1997թ.-ին:
ՅՈՒՆԵՍԿՕ-ի ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանության մասին կոնվենցիա (2003թ.)	Սույն Կոնվենցիայի նպատակներն են՝ ա) ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանությունը, բ) ապահովել շահագրգիռ համայնքների, խմբերի և անհատների ոչ նյութական մշակութային ժառանգության նկատմամբ հարգանքը, գ) տեղական, ազգային և միջազգային մակարդակներում բարձրացնել ոչ նյութական մշակութային ժառանգության կարևորության մասին իրազեկությունը և ապահովել դրա փոխադարձ գնահատումը, դ) ապահովել միջազգային համագործակցություն և օգնություն: Հայաստանի կողմից վավերացվել է 2006թ.-ին:
"Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության հասանելիության, որոշումներ	Օրհուսի կոնվենցիան նոր տեսակի բնապահպանական համաձայնագիր է: Այն կապակցում է բնապահպանական և մարդու իրավունքները և հաստատում է այն, որ կայուն զարգացումը կարող է ապահովվել միայն

Միջազգային կոնվենցիաներ և արձանագրություններ	Նկարագիրը
ընդունելու գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին" կոնվենցիա (Օրիու, 1998թ.)	բոլոր մասնակից կողմերի ներգրավման միջոցով: ԶՅ-ի կողմից վավերացվել է 2001թ.-ին:
Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) կոնվենցիաներ	<p>Հայաստանը վավերացրել է ԱՄԿ 29 կոնվենցիաներ, ներառյալ հետևյալ հիմնարար կոնվենցիաները՝</p> <ul style="list-style-type: none"> <li>• Հարկադիր կամ պարտադիր աշխատանքի մասին, 1930թ. (վավերացվել է 17.12.2004թ.),</li> <li>• Միավորման ազատության և կազմակերպելու իրավունքի պաշտպանության մասին, 1948թ. (վավերացվել է 02.01.2006թ.),</li> <li>• Կոլեկտիվ բանակցություններ կազմակերպելու և վարելու իրավունքի սկզբունքների կիրառման մասին, 1949թ. (վավերացվել է 12.11.2003թ.),</li> <li>• Հավասար վարձատրության մասին, 1951թ. (վավերացվել է 29.07.1994թ.),</li> <li>• Հարկադիր աշխատանքի վերացման մասին, 1957թ. (վավերացվել է 17.12.2004թ.),</li> <li>• Աշխատանքի և զբաղմունքների բնագավառում խտրականության մասին, 1958թ. (վավերացվել է 29.07.1994թ.),</li> <li>• Նվազագույն տարիքի մասին, 1973թ. (վավերացվել է 27.01.2006թ.),</li> <li>• Երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերի մասին, 1999թ. (վավերացվել է 02.01.2006թ.):</li> </ul>

Ծրագրի համար կիրառելի **ԵՄ օրենսդրությունը** ներառում է հետևյալ շրջաբերականները՝

- Շրջաբերական 2010/75/EU արդյունաբերական արտանետումների (համապարփակ աղտոտման կանխարգելման և հսկողության) վերաբերյալ,
- Եվրոպական Խորհրդարանի ԵՄ շրջաբերական 2019/1936 և Եվրոպական Խորհրդի 2019 թվականի հոկտեմբերի 23-ի շրջաբերական 2008/96/EC՝ ճանապարհային ենթակառուցվածքների անվտանգ կառավարման վերաբերյալ,
- Շրջաբերական 2004/54/EC տրանսեվրոպական ցանցում թունելների համար անվտանգության նվազագույն պահանջներ,
- Շրջաբերական 2011/92/EU, որը փոփոխված է շրջաբերական 2014/52/EU-ով՝ որոշ պետական և մասնավոր նախագծերի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ,
- ԵՄ Շրջաբերական 92/43/EEC բնական կենսամիջավայրերի և վայրի կենդանական ու բուսական աշխարհի պահպանման վերաբերյալ,
- Շրջաբերական 2008/98/EC թափոնների և որոշ հրահանգներ չեղյալ հայտարարելու վերաբերյալ,
- ՄՊ ջրի շրջանակային շրջաբերական (2000/60/EC),
- Խորհրդի շրջաբերական 2009/147/EC վայրի թռչունների պահպանման վերաբերյալ:

**4.2.2 Վարկատուների քաղաքականությունների պահանջները**

Ծրագիրը նաև պարտավորվում է հետևել Վարկատուների հետևյալ քաղաքականություններին՝

- Վերակառուցման և Չարգացման Եվրոպական Բանկ (ՎՉԵԲ) Բնապահպանական և սոցիալական քաղաքականություն (2019), ներառյալ Իրագործման Պահանջներ (ԻՊ) 1-6, 8 և 10,



- Եվրոպական Ներդրումային Բանկի (ԵՆԲ) Բնապահպանական և սոցիալական քաղաքականություն (2022թ.), ներառյալ Բնապահպանական և Սոցիալական Ստանդարտները (ԲՍՍ) 1-10,
- Ասիական Չարգացման Բանկի (ԱՉԲ) Անվտանգության քաղաքականության հայտարարություն (2009թ.), ներառյալ Անվտանգության Պահանջներ 1-ը և 2-ը:

**4.2.3 Ծրագրի ԲևՍ կառավարման պահանջները**

**4.2.3.1 Ծրագրին առնչվող բնապահպանական նորմերը**

**Աղյուսակ 3**-ում ներկայացված են շրջակա միջավայրի հարաչափերի սահմանային արժեքները, որոնք չպետք է գերազանցվեն շինարարության կամ շահագործման փուլերում: Վարկատուների քաղաքականությունների համաձայն՝ դրանք հիմնված են համապատասխան ազգային կամ ԵՄ օրենսդրության ամենախիստ օրենսդրության վրա: Կապալառուն / ճՂ-ը պետք է իրականացնի շրջակա միջավայրի մշտադիտարկում ստուգելու համար, որ այդ սահմանային արժեքները չեն գերազանցվել շինարարական աշխատանքների կամ ճանապարհի շահագործման արդյունքում, և ստուգի, թե արդյոք լրացուցիչ մեղմացնող միջոցառումներ կամ հսկողություն պահանջվում է խախտումների դեպքում:

**Աղյուսակ 3. Ծրագրի կողմից ընդունված բնապահպանական սահմանային արժեքները**

Գործոնը	Ընդունելի ստանդարտը	Ջարաչափը	Սահմանային արժեքը
Մթնոլորտային արտանետումներ	ԱՅԿ օդի որակի ուղեցույցներ (2021)	ԿՄ2.5	15 $\mu\text{g}/\text{m}^3$ - 24 ժամյա միջին արժեք
		ԿՄ10	45 $\mu\text{g}/\text{m}^3$ - 24 ժամյա միջին արժեք
		O <sub>3</sub>	45 $\mu\text{g}/\text{m}^3$ - 8 ժամյա միջին արժեք
		SO <sub>2</sub>	40 $\mu\text{g}/\text{m}^3$ - 24 ժամյա միջին արժեք
		NO <sub>2</sub>	25 $\mu\text{g}/\text{m}^3$ - 24 ժամյա միջին արժեք
		CO	4,000 $\mu\text{g}/\text{m}^3$ - 24 ժամյա միջին արժեք
Աղմուկ	ԱՅԿ համայնքային աղմուկի ուղեցույցներ (1999)  ՀՀ սանիտարական նորմեր №2-III-11.3՝ բնակելի շենքերին, պոլիկլինիկաների, ամբուլատորիաների, դիսպանսերների, հանգստյան տների, պանսիոնատների, ծերերի և հաշմանդամների համար տուն-ինտերնատների, մանկապարտեզների, դպրոցների և ուսումնական այլ հաստատությունների անմիջապես հարող տարածքների համար (առավելագույն աղմուկի մակարդակ՝ միայն ցերեկային)	Բնակելի տարածքից դուրս Ազատ դաշտի վարկանիշային մակարդակ (LAr,Tr) ցերեկային ժամերին (07:00-23:00)	55 LAէքվ (դԲ)
		Ձայնի միջին մակարդակ բնակավայրում մոտարկված 8 ժամյա արժեքին (LA-g T) գիշերային ժամերին (23:00-07:00)	45 LAէքվ (դԲ)
		Առավելագույն աղմուկի մակարդակ, ցերեկային (07.00-23.00)	70 դԲԱ
		Ձայնի առավելագույն մակարդակ բնակավայրում, (Lառաւվ., f) գիշերային (23:00-07:00)	60 LAէքվ (դԲ)
Թրթռում		Շենքեր / շինություններ (ներառյալ բնակելի տները)	25 մմ/վ

Գործոնը	Ընդունելի ստանդարտը	Հարաչափը	Սահմանային արժեքը
	Chiapetta F., Van Vreden A., 2000. Թրթռում / պայթեցումների հսկողություն, վնասման չափանիշ, գրառումների գրանցում և բողոքների հետ գործածություն: 9-րդ տարեկան կոնֆերանս՝ պայթուցիկների, հորատման և պայթեցման տեխնոլոգիաների վերաբերյալ, CSIR Կենֆերանս կենտրոն, Պրետորիա, 2000	Մշակութային ժառանգության կառույցներ, որոնք գտնվում են ճանապարհահատվածի շինարարական գոտիների եզրից 50 մ հեռավորության վրա	6 մ/վ
Մակերևութային ջրերի որակ	Տես <b>Հավելված 2-ը</b>	Տես <b>Հավելված 2-ը</b>	Տես <b>Հավելված 2-ը</b>
Կայունորև կեղտաջրեր	ՄՖԿ ԲԱԱ ուղեցույցեր (2007)՝ կեղտաջրեր և շոջակա ջուր	pH	6-9
		ԹԿՊ	30 մգ/լ
		ԹԶՊ	125 մգ/լ
		Ընդհանուր ազոտ	10 մգ/լ
		Ընդհանուր ֆոսֆոր	2 մգ/լ
		Նավթամթերք	10 մգ/լ
		Ընդհանուր կախյալ կյուլթեր	50 մգ/լ
		Ընդհանուր կոլիֆորմ բակտերիաներ	400 Ամենահավանական Թվաքանակը (MPN)/100 մլ

**4.2.4 ԲևՍ կառավարման պլանները**

Հետևյալ ԲևՍ կառավարման պլանները տնօրինվում և իրականացվում են ճԴ-ի կողմից: Այդ պլանները մշակվում են մինչև Շինարարության կապալառուի ընտրության մրցույթը: Որպես այդպիսին, այս պլանների հատուկ պահանջները պետք է հաշվի առնվեն ապագայում կապալառուների կողմից, որպեսզի ճիշտ ներկայացնեն իրենք մոտեցումները շինարարական աշխատանքների նկատմամբ՝ դիտարկելով տեխնիկական սահմանափակումները և պլանների իրագործման արժեքը / ժամանակացույցը: Այդ պլաններն են՝

- Մշակութային ժառանգության կառավարման պլան,
- Շահառուների ներգրավվածության պլան,
- Կենսաբազմազանության միջոցառումների պլան,
- Տարաբնակեցման շրջանակ (Տարաբնակեցման պլանը կմշակվի ավելի ուշ):

Կապալառուից կպահանջվի մշակել և իրականացնել հետևյալ շինարարական փուլի ԲևՍ կառավարման պլանները և ընթացակարգերը՝ ներառելով համապատասխան առաջարկվող մեղմացման միջոցառումները, որոնք թվարկված են ստորև **Աղյուսակ 4-**ում և այլ ԼՄԳ գործողություններ՝ ըստ անհրաժեշտության.

- Օդի որակի կառավարման պլան,
- Հողի բերրի շերտի կառավարման պլան,
- Թափոնների կառավարման պլան (ներառյալ Հողային հանույթի տեղադրման ենթապլանը),
- Էրոզիայի վերահսկման պլան,
- Շեպերի կայունացման պլան (պահանջվում է գեո-վտանգների ռիսկերի գնահատմամբ),
- Կեղտաջրերի և հեղեղաջրերի կառավարման պլան,
- Արտահոսքերի կառավարման պլան,



- Աղմուկի և թրթռումների կառավարման պլան (ներառյալ պայթեցումների կառավարման պլանը),
- Վտանգավոր կյուրթերի կառավարման պլան,
- Թունելային ջրերի կառավարման պլան (ներառյալ ստորերկրյա ջրերի հեռացումը թունելներից),
- Երթևեկության կառավարման պլան (ներառյալ ճանապարհային աուդիտ և վիճակի հետազոտություն, ճանապարհների ժամանակավոր ենթապլաններ և մուտքի և տեղական կապի պլան),
- Համայնքային առողջության և աշխատանքի անվտանգության պլան,
- Աշխատանքի և աշխատանքային պայմանների կառավարման պլան (որպես աշխատողների բնակեցման պլանի ենթապլան և աշխատողների բողոքարկման մեխանիզմ),
- Աշխատողների վարքագծի կանոններ,
- Մշակութային ժառանգության կառավարման պլան,
- Պատահական գտածոների ընթացակարգ,
- Արտակարգ իրավիճակների պատրաստության և արձագանքման պլան,
- Ինվազիվ տեսակների կառավարման պլան (ինչպես նշված է Կենսաբազմազանության միջոցառումների պլանում),
- Ռեկուլտիվացման/հողերի վերականգնման պլան (ժամանակավոր օգտագործվող տեղամասերի համար),
- Շինարարական ճամբարի կառավարման պլան (հիմնված բնակեցման տարբերակների ռիսկի գնահատման վրա),
- Բետոնի գործարանի կառավարման պլան,
- Ասֆալտի գործարանի կառավարման պլան,
- Գնումների պլան,
- Կոմունալ ծառայությունների պաշտպանության և տեղափոխման պլան,
- Դեմոբիլիզացման պլան,
- Ծրագրի աշխատուժի հավաքագրման քաղաքականություն,
- Հավաքագրման պլան:

ՃԴ-ը պատասխանատու կլինի շահագործման փուլի հետևյալ ԲևՍ կառավարման պլանների մշակման և իրականացման համար՝ ներառելով ստորև **Աղյուսակ 4**-ում թվարկված պլաներով առաջարկվող մեղմացնող միջոցառումները՝

- Աղմուկի և թրթռումների կառավարման պլան,
- Օդի որակի կառավարման պլան,
- Թափոնների կառավարման պլան,
- Արտակարգ իրավիճակների պատրաստության և արձագանքման պլան,
- Համայնքային առողջության և աշխատանքի անվտանգության պլան,
- Արտահոսքերի կառավարման պլան,
- Շահառուների ներգրավվածության պլան,
- Աշխատողների վարքագծի կանոններ,
- Կենսաբազմազանության միջոցառումների պլան,
- Տեխնիկական սպասարկման աշխատանքների համար նաև՝ Շահագործման փուլի գնումների պլան և Աշխատանքի և աշխատանքային պայմանների կառավարման պլան:

**4.2.5 Բնապահպանական և սոցիալական մեղմացնող պահանջներ**

ՇՄՍԱԳ գործընթացի միջոցով բացահայտված պոտենցիալ ԲևՍ ռիսկերի և ազդեցությունների արդյունավետ կառավարումն ապահովելու համար (տես հատորներ 2, 3, 4 և 5<sup>6</sup>) **Աղյուսակ 4**-ում ներկայացված են առաջարկվող նվազագույն մեղմացնող և վերահսկման միջոցառումները, որոնք պետք է իրականացվեն և/կամ ներառվեն համապատասխան ԲևՍ կառավարման պլաններում՝ խուսափելու կամ սահմանափակելու համար անբարենպաստ ռիսկերի/ազդեցությունների չափը և մեծացնելու համար օգուտները: Այնուամենայնիվ, ճՂ-ն և Կապալառուն պետք է ձգտեն ապահովել, որ միջազգային փորձի մեղմացնող լավագույն միջազգային գործելակերպը ներառվի կառավարման պլաններում՝ Վարկատուների պահանջները բավարարելու համար:

**Աղյուսակ 4. Բնապահպանական և սոցիալական մեղմացում/վերահսկում և բարելավում**

Գործոնը	Առաջարկվող նվազագույն մեղմացնող/վերահսկման և բարելավման միջոցառումներ	Համապատասխան ԲևՍ կառավարման պլան(ներ)	Պատասխանատվություն (ՊևԻ, Հ կամ Մ) <sup>7</sup>	Թիրախ / Ցուցիչ	Մեղմացման նախնական արժեքը (ԱՄՆ դոլար) <sup>8</sup>
<b>Նախաշինարարության փուլ և շինարարություն</b>					
Լիցենզիաների, թույլտվությունների և համաձայնագրերի ստացում	Ստանալ բոլոր անհրաժեշտ թույլտվությունները և կնքել բոլոր պահանջվող պայմանագրերը, ներառյալ (բայց չսահմանափակվելով) <sup>6</sup> <ul style="list-style-type: none"> <li>Բուսահողի հեռացման հաստատում, թափոնների առաջացման նորմատիվներ և դրանց տեղադրման սահմանաքանակներ, կեղտաջրերի թույլատրելի սահմանային արտահոսքերի նորմատիվներ, ջրօգտագործման թույլտվություններ, համաձայնեցված ՇՄՆ կողմից,</li> <li>Պայմանագրեր թափոնների և կեղտաջրերի հեռացման/մշակման լիցենզավորված ընկերությունների հետ (ոչ վտանգավոր և վտանգավոր թափոնների և կեղտաջրերի/ տիղմի և այլնի համար),</li> <li>Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական պետական եզրակացություններ / ՇՄՆ և համայնքային իշխանությունների թույլտվություններ հողային հանույթի տեղադրման վայրերի, ասֆալտի և բետոնի գործարանների համար, որոնք ենթակա են ազգային ՇՄԱԳ-ի:</li> </ul>	Կ/Չ	ՊևԻ՝ Շին. կապալառու, Մ՝ Ճարտարագետ	Բոլոր պահանջվող թույլտվությունների/ համաձայնագրերի և եզրակացությունների պատճենները պետք է տրամադրվեն վերահսկող ճարտարագետին և ճՂ-ին մինչև շինարարությունը սկսելը:	Ներառված է Շին. կապալառուի և վերահսկող ճարտարագետի պայմանագրերում, ինչպես նշված է <b>Բաժին 4.6</b> -ում:

<sup>6</sup> Եթե այս հատորներում և ներկայիս ԲՍԿԴ-ի միջև հայտնաբերվեն մեղմացման միջոցառումների ձևակերպման տարբերություններ, ԲՍԿԴ-ն կգերակայի, քանի որ դրանում ավելի մանրամասն մեղմացում տրամադրելու մոտեցում է ընդունվել:

<sup>7</sup> Պ՝ պատրաստում, Ի՝ իրագործում, Հ՝ հաստատում (նշում ճՂ-ը կարող է ներկայացնել անառարկություն՝ իր հաստատումը ցույց տալու համար), Մ՝ պահանջվող վերահսկման/մեղմացնող միջոցառումների արդյունավետ իրագործման մշտադիտարկում: ԾԻԳ խորհրդատուն վերանայման դեր ունի բոլոր գործողությունների համար, որպեսզի աջակցի ճՂ-ին (քանի դեռ հակառակը չի նշվում)

<sup>8</sup>Սա հիմնված է ՇՄՍԱԳ-ի խորհրդատուի ենթադրությունների վրա և բերված է միայն տեղեկատվական նպատակներով

Գործունը	Առաջարկվող նվազագույն մեղմացնող/վերահսկման և բարելավման միջոցառումներ	Համապատասխան ԲԱՍ կառավարման պլան(ներ)	Պատասխանատվություն (ՊԱԻ, Հ կամ Մ) <sup>7</sup>	Թիրախ / Ցուցիչ	Մեղմացման նախնական արժեքը (ԱՄՆ դոլար) <sup>8</sup>
Օդի որակ	<ul style="list-style-type: none"> <li>• Ղևախատել ԿՄ2.5-ը և շինարարական մեքենաներից արտանետվող այլ արտանետումները, երբ շինարարական աշխատանքները նույնականացված լինեն, իսկ հետագա մեղմացման միջոցառումները մշակված և իրականացված, եթե Ղևախատումը ցույց է տալիս նույնի անհրաժեշտությունը:</li> <li>• Նվազագույնի հասցնել փոշին նյութերի հետ աշխատելու աղբյուրներից, ինչպիսիք են փոխակրիչները և աղբամանները, օգտագործելով ծածկեր և/կամ հսկիչ սարքավորումներ (ջրի զսպում):</li> <li>• Բաց տարածքի աղբյուրներից, ներառյալ պահեստային կույտերից եկող փոշին նվազագույնի հասցնել վերահսկման միջոցների կիրառմամբ, ինչպիսիք են պատյանների և ծածկերի տեղադրումը և խոնավության պարունակության բարձրացումը:</li> <li>• Պետք է կիրառվեն փոշու զսպման մեթոդներ, ինչպես օրինակ՝ ջրի կամ քիմիական կապող նյութերի կիրառումը՝ չասֆալտապատ ճանապարհների վրա մեքենաների տեղաշարժից առաջացող փոշին նվազագույնի հասցնելու համար, հատկապես չոր կամ քամոտ պայմաններում:</li> <li>• Փոշու Էկրանների օգտագործումը նյութերի պաշարներին մոտ:</li> <li>• Շինարարական օբյեկտների և սարքավորումների տեղակայումը (ներառյալ բետոնի և ասֆալտի գործարանները, ջարդիչները և շինարարական ճամբարները) պետք է արգելվի ցանկացած բնակելի տարածքից կամ զգայուն ընկալիչից (դպրոց, հիվանդանոց, եկեղեցի և այլն) 500 մ-ից մոտ և պահպանվող տարածքներից առնվազն 2 կմ հեռավորության վրա, որտեղ հնարավոր է:</li> <li>• Սարքավորումների և կառույցների տեղակայումը պետք է հաշվի առնի նաև քամու գերակշռող ուղղությունը:</li> <li>• Արգելվում է թափոնների բաց այրումը:</li> <li>• Շինհրապարակներում և չասֆալտապատ ճանապարհներին կիրառել արագության սահմանափակումներ՝ մեքենաների տեղաշարժից առաջացող փոշու քանակությունը նվազեցնելու համար:</li> <li>• Հնարավորության դեպքում պետք է իրականացվի չասֆալտապատված ճանապարհների խտացում:</li> <li>• Ապահովել բեռնատարների լվացման հարմարություններ թունելի մուտքերի մոտ և կամուրջների շինարարական տեղամասերից անվտանգ հեռավորության վրա՝ ցեխի և փոշու հետքերը կանխելու համար:</li> <li>• Բոլոր բեռնատարները, որոնք օգտագործվում են շինհրապարակներ և այնտեղից շինանյութեր տեղափոխելու համար, պետք է ծածկված լինեն:</li> </ul>	Օդի որակի կառավարման պլան	ՊԱԻ՝ Շին. կապալառու, Հ՝ Վերահսկող ճարտարագետ, ԾԴ, Մ՝ Վերահսկող ճարտարագետ	Օդի որակի կառավարման պլանը մշակվում և հաստատվում է մինչև շինարարության մեկնարկը  Բոլոր նշված մեղմացնող միջոցառումներն արդյունավետորեն իրականացվում են շինարարության ընթացքում	Գործիքային չափումների նախահաշիվ՝ 46,080 ԱՄՆ դոլար շինարարության համար ( <b>Աղյուսակ 7</b> ),  Մոդելավորում՝ 30000 ԱՄՆ դոլար  Ցուրաքանչյուր կողմի բյուջեում ներառված այլ ծախսերը և ԲԱՍ-ի կառավարման ծախսերը ներկայացված են <b>Բաժին 4.6</b> -ում

Գործոնը	Առաջարկվող նվազագույն մեղմացնող/վերահսկման և բարելավման միջոցառումներ	Համապատասխան ԲԼՍ կառավարման պլան(ներ)	Պատասխանատվություն (ՊԼԻ, Հ կամ Մ) <sup>7</sup>	Թիրախ / Ցուցիչ	Մեղմացման նախնական արժեքը (ԱՄՆ դոլար) <sup>8</sup>
	<ul style="list-style-type: none"> <li>• Օգտագործվող վառելիքը պետք է համապատասխանի գազի արտանետումների հայկական ստանդարտներին:</li> <li>• Արգելել մեքենաների և շինարարական սարքավորումների շարժիչների դատարկ ընթացքը, երբ չեն օգտագործվում:</li> <li>• Հնարավորության դեպքում պետք է նվազագույնի հասցնել դիզելային գեներատորների օգտագործումը:</li> <li>• Տեղադրել արտանետումների անշարժ աղբյուրները (օրինակ՝ շարժական դիզելային գեներատորներ, կոմպրեսորներ և այլն) որքան հնարավոր է հեռու զգայուն ընկալիչներից:</li> <li>• Անֆալտապատման աշխատանքներն իրականացնել ցածր ջերմաստիճաններում՝ համաձայն Կլիմայի հարմարվողականության եվրոպական պլատֆորմի կողմից սահմանված ճանապարհների նախագծման, շինարարության և սպասարկման համար կլիմայական պաշտպանված ստանդարտների:</li> <li>• Համոզվել, որ բոլոր մեքենաներն ու տեխնիկան պատշաճ պահպանվում են արտանետումները նվազագույնի հասցնելու համար: Ծուխ արձակող մեքենաներն ու սարքավորումները չպետք է օգտագործվեն, եթե դրանք հնարավոր չէ շտկել, պետք է հեռացվեն շին.հիրապարակից:</li> <li>• Անհապաղ վերանորոգել անսարք շինարարական մեքենաները և սարքավորումները:</li> <li>• Օգտագործել շինարարական տեխնիկա և տրանսպորտային միջոցներ, որոնք համապատասխանում են արտանետումների ազգային ստանդարտներին:</li> <li>• Հնարավորության դեպքում օգտագործել էլեկտրական էներգիայով, այլ ոչ թե գազով կամ դիզելային էներգիայով աշխատող սարքավորումներ:</li> <li>• Ճանապարհային երթևեկության ուսումնասիրությունների ավարտից հետո վերագործարկել շահագործման փուլերի համար NO<sub>2</sub>, CO և PM<sub>2.5</sub> մոդելավորումը և հաշվի առնել, թե արդյոք պահանջվում են լրացուցիչ մեղմացնող միջոցառումներ (եթե այո, և իրականացրել դրանք):</li> </ul>				
Աղմուկ և թրթռում	<ul style="list-style-type: none"> <li>• Աղմուկի և թրթռումների կառավարման պլանները պետք է ներառեն շինարարական շինարարակից 25 մ և թունելի պորտալներից 100 մ հեռավորության վրա գտնվող բոլոր կառույցների նախաշինարարական վիճակի ուսումնասիրությունը, եթե այնտեղ կիրառվի ավելի մեծ պայթեցման լիցք (ՄԺ վայրերի համար՝ տես ստորև):</li> <li>• Աղմուկի, թրթռման և պայթեցումների կառավարման պլանների պահանջները պետք է համապատասխանեցվեն Մշակութային Ժառանգության կառավարման պլանին՝ ապահովելու համար, որ համապատասխան մեղմացնող միջոցառումներ իրականացվեն</li> </ul>	Աղմուկի և թրթռման կառավարման պլան	ՊԼԻ՝ Շին. կապալառու (ներառյալ կառուցվածքների/ սեյսմիկ ճարտարագետը)  Հ՝ Վերահսկող ճարտարագետ,	Աղմուկի և թրթռման կառավարման պլանը և Պայթեցումների կառավարման պլանը մշակված և հաստատված են մինչ շինարարության մեկնարկը:	Աղմուկի և թրթռման գործիքային չափումների նախահաշիվ՝ 374,400 ԱՄՆ դոլար (Կապալառու)

Գործոնը	Առաջարկվող նվազագույն մեղմացնող/վերահսկման և բարելավման միջոցառումներ	Համապատասխան ԲԱՍ կառավարման պլան(ներ)	Պատասխանատվություն (ՊԱԻ, Հ կամ Մ) <sup>7</sup>	Թիրախ / Ցուցիչ	Մեղմացման նախնական արժեքը (ԱՄՆ դոլար) <sup>8</sup>
	<p>մշակութային ժառանգությանը հասցվող վնասը խուսափելու/սահմանափակելու համար: Որպես այդպիսին, դրանում ներառել բոլոր ՄԺ վայրերի նախաշինարարական վիճակի ուսումնասիրությունը, որոնք գտնվում են առաջարկվող ճանապարհի հետքից (շինարարական սահմանից) 50 մ, նվազագույն լիցքի պայթեցման աղբյուրից 50 մ և թունելի պորտալներից 200 մ հեռավորության վրա (քանի որ կա ավելի մեծ լիցքերով պայթեցման հնարավորություն), ինչպես նաև մշտադիտարկման և հսկողության բոլոր գործողությունները, որոնք պետք է իրականացնի ՄԺ փորձագետը Կապալառուի կառուցվածքի/սեյսմիկ ճարտարագետների հետ, որոնք պատասխանատու են Աղմուկի և թրթռումների կառավարման պլանի համար [և ՄԺ մշտադիտարկողը պետք է զննի]:</p> <ul style="list-style-type: none"> <li>Վերահսկող ճարտարագետը կիրականացնի կենտրոնացված գործիքային չափումներ ընտրված զգայուն վայրերում (ՄԺ վայրեր և/կամ բնակելի շենքեր) շինարարական աշխատանքների ամենաազդեցիկ փուլերի ընթացքում և պետք է որոշի թրթռման արագության անցողիկ և շարունակական հարակից մակարդակը: Ստացված տվյալները պետք է համեմատվեն <b>Աղյուսակ 3</b>-ում ներկայացված կարգավորող նորմերի հետ: Եթե Կապալառուն գերազանցի այդ նորմերը կամ մոտ լինի դրանց, ճարտարագետը պետք է դադարեցնի աշխատանքները և առաջարկի աշխատանքի այլ եղանակ՝ թրթռումները և անհանգստությունը նվազեցնելու և առաջարկելու շինարարության մեթոդի փոփոխություն: Կապալառուից կարող է պահանջվել փոխել մեքենաների և սարքավորումների շահագործման ռեժիմը և այլն:</li> <li>Դիզեյնին շարժիչով աշխատող բոլոր մեքենաները և սարքավորումները (ինչպիսիք են գեներատորները և օդային կոմպրեսորները) պետք է ունենան բարձր տեխնիկական սպասարկման մակարդակ: Մասնավորապես, պետք է կատարվի կանոնավոր ստուգում և, անհրաժեշտության դեպքում, մուտքի և արտանետման խլացուցիչների փոխարինում: Սարքավորումների աղմուկի արտանետման բնութագրերի ցանկացած փոփոխություն պետք է տեխնիկական սպասարկման պատճառ հանդիսանա:</li> <li>Հնարավորության դեպքում նոր գնումներ կատարելիս պետք է ընտրվեն ավելի ցածր ձայնային մակարդակ ունեցող սարքավորումներ: Մատակարարներից պահանջել երաշխավորել սարքավորումների նախագծման օպտիմալացված աղմուկի մակարդակը:</li> <li>Մեքենաները/տրանսպորտային միջոցները, որոնք շահագործվում են ընդհատումներով, պետք է անջատվեն, երբ չեն օգտագործվում:</li> </ul>	<p>Պայթեցումների կառավարման պլան</p>	<p>ԸՂ, վարկատուներ, Մ՝ Վերահսկող ճարտարագետ (ներառյալ կառուցվածքների/ սեյսմիկ ճարտարագետը և վերահաստատող թրթռման գործիքային մշտադիտարկումը)</p>	<p>Բոլոր նշված մեղմացման միջոցառումներն արդյունավետորեն իրականացվում են շինարարության ընթացքում:</p>	<p>Վերահաստատող թրթռման գործիքային չափումների նախահաշիվ՝ 24,600 ԱՄՆ դոլար (Վերահսկող ճարտարագետ)</p> <p>Ցուրաքանչյուր կողմի բյուջեում ներառված այլ ծախսերը և ԲԱԱԳ-ի կառավարման ծախսերը ներկայացված են <b>Բաժին 4.6</b>-ում</p>

Գործոնը	Առաջարկվող նվազագույն մեղմացնող/վերահսկման և բարելավման միջոցառումներ	Համապատասխան ԲևՍ կառավարման պլան(ներ)	Պատասխանատվություն (ՊԱԻ, Հ կամ Մ) <sup>7</sup>	Թիրախ / Ցուցիչ	Մեղմացման նախնական արժեքը (ԱՄՆ դոլար) <sup>8</sup>
	<ul style="list-style-type: none"> <li>• Ցանկացած կայան, ինչպիսիք են գեներատորները կամ պոմպերը, որոնք շահագործվելու են նախանշված աշխատանքային ժամերից առաջ և հետո, պետք է պարփակվի ձայնամեկուսիչ խցիկով:</li> <li>• Օգտագործել շինարարական սարքավորումներ և տրանսպորտային միջոցներ, որոնք հագեցված են համապատասխան աղմուկը զսպող սարքերով: Հագեցնել բոլոր օդանշական գործիքները արդյունավետ խլացուցիչներով:</li> <li>• Նվազագույնի հասցնել տրանսպորտային միջոցների հետընթացի անհրաժեշտությունը:</li> <li>• Նվազագույնի հասցնել ձայնային ազդանշանի օգտագործումը:</li> <li>• Նշել աղմուկը սահմանափակող շինարարական մեթոդների կիրառումը, օրինակ. նշելով պտտվող, այլ ոչ թե շարժվող կոյտերի օգտագործումը:</li> <li>• Հնարավորության դեպքում պարփակել աղուկ արձակող սարքավորումները, սահմանափակել դրանց անդադար շահագործումը, խուսափել աղմուկ առաջացնող սարքավորումների միաժամանակյա շահագործումից:</li> <li>• Տեղեկացնել համայնքին շինարարական աշխատանքների ժամանակացույցի և տևողության մասին, հատկապես, երբ դրանք կարող են առաջացնել աղմուկի բարձր մակարդակ:</li> <li>• Սահմանափակել բեռնատարների արագությունը՝ ոչ ավելի, քան 40 կմ/ժ, տեղական համայնքներով երթևեկելիս:</li> <li>• Չգայուն ընկալիչների վրա աղմուկի ազդեցությունը նվազեցնելու միջոցառումների ապահովում, օրինակ.             <ul style="list-style-type: none"> <li>○ ժամանակավոր արգելապատնեշների տեղադրում,</li> <li>○ Որոշ գործողությունների սահմանափակում ավելի քիչ զգայուն ժամերին, օրինակ՝ պայթեցման գործողությունների սահմանափակում միայն կեսօրով (10:00 - 14:00):</li> </ul> </li> <li>• Թունելի մուտքերի/ելքերի մոտ պետք է օգտագործվեն աղմուկի խոչընդոտներ/ժամանակավոր պարիսպներ՝ այդ տարածքներից գիշերային աղմուկը նվազեցնելու համար:</li> <li>• Շինարարական աշխատանքները խստիվ արգելվելու են ժամը 22:00-ից մինչև առավոտյան 06:00-ն բնակավայրերի մոտ: Երբ աշխատում են զգայուն տարածքների մոտ (250 մ-ի սահմաններում), ինչպիսիք են բնակելի տները, դպրոցները կամ բժշկական հաստատությունները, Կապալառուների աշխատանքային ժամերը պետք է սահմանափակվեն առավոտյան 8:00-ից մինչև երեկոյան 18:00-ն:</li> </ul>				

Գործոնը	Առաջարկվող նվազագույն մեղմացնող/վերահսկման և բարելավման միջոցառումներ	Համապատասխան ԲևՍ կառավարման պլան(ներ)	Պատասխանատվություն (ՊԱԻ, Հ կամ Մ) <sup>7</sup>	Թիրախ / Ցուցիչ	Մեղմացման նախնական արժեքը (ԱՄՆ դոլար) <sup>8</sup>
	<ul style="list-style-type: none"> <li>Կապալառուն պետք է արձագանքի աղմուկի և թրթռումների հետ կապված ցանկացած բողոքի և հնարավորինս շուտ իրականացնի վերացման միջոցառումներ:</li> <li>Պայթյունի նախագծերը պետք է վերանայվեն առաջին պայթյունից առաջ՝ համոզվելու համար, որ լիցքավորումը տեղին է և նվազագույնի է հասցնում տեղանքից դուրս հնարավոր ազդեցությունները:</li> <li>Համոզվել, որ հորատման և պայթեցման նախագծերը և խտացման գործողություններն ընդունված են հաշվի առնելով հողի թրթռումը նվազագույնի հասցնելը:</li> <li>Կիրառել միայն էլեկտրոնային մեկնարկային համակարգեր՝ մեկ անցքից կրակելը հեշտացնելու համար:</li> <li>Նախագծել ավելի փոքր տրամագծով պայթուցիկ անցքեր, որոնք կօգտագործեն ավելի քիչ պայթուցիկ յուրաքանչյուր անցքի համար:</li> <li>Հնարավորության դեպքում կիրառել մեխանիկական փորումներ՝ պայթեցման կարիքը նվազեցնելու համար:</li> </ul>				
Երկրաբանություն և գեո-վտանգներ	Ծանոթանալ <b>Հավելված 1</b> -ում ներկայացված գեո-վտանգների ռիսկերի վերլուծության աշխատանքների պահանջվող շրջանակին:	Հավանական է Շեպերի կայունացման պլանի <sup>9</sup> մշակումը որպես գեո-վտանգների ռիսկերի գնահատման արդյունք	ՊԱԻ՝ Շին. Կապալառու Կ՝ Վերահսկող ճարտարագետ, ՃԴ, ՇԻԳ Մ՝ Վերահսկող ճարտարագետ	Ռիսկերի վերլուծության արդյունքներն օգտագործվում են Շեպերի կայունացման պլանի մշակման համար, որը պետք է հաստատվի մինչև շինարարության մեկնարկը: Բոլոր նշված մեղմացնող միջոցառումներն արդյունավետորեն իրականացվում են	Երկրաբանական ուսումնասիրության ծախսերը հոգում է ՎՉԵԲ-ը  Նախագծային փոփոխություններ և պլանի մշակում, որոնք ներառված են Կապալառուի և Վերահսկման բյուջեներում և ՃԴ-ի բյուջեում

<sup>9</sup> Շեպերի կայունացման պլանը պետք է լինի գեո-վտանգի գնահատման արդյունք (**Հավելված 1**) և ավելի շատ ինժեներական գործառնություն է, քան բնապահպանական: Ակնկալվում է, որ այն կմշակվի Շինարարական Կապալառուի կողմից ամեն դեպքում՝ որպես տեխնիկական փաստաթղթերի մաս

Գործոնը	Առաջարկվող նվազագույն մեղմացնող/վերահսկման և բարելավման միջոցառումներ	Համապատասխան ԲԱՍ կառավարման պլան(ներ)	Պատասխանատվություն (ՊԱԻ, Հ կամ Մ) <sup>7</sup>	Թիրախ / Ցուցիչ	Մեղմացման նախնական արժեքը (ԱՄՆ դոլար) <sup>8</sup>
				շինարարության ընթացքում:	
Մակերևութային և ստորերկրյա ջրեր	<ul style="list-style-type: none"> <li>Կամուրջների և մակերևութային ջրային հոսքերին կից կամ ներսում ցանկացած աշխատանքներ պետք է իրականացվեն հնարավորինս ցածր հոսքերի ժամանակաշրջաններում:</li> <li>Կառուցել հավաքման ավազաններ, որպեսզի կարգավորվեն արտահոսքերը դեպի մակերևութային ջրեր, որտեղ անհրաժեշտ է, և հնարավորություն ընձեռնվի նստեցնել հողի մասնիկները՝ նվազագույնի հասցնելով պղտորության ազդեցությունը:</li> <li>Պահպանել բոլոր տրանսպորտային միջոցները և շինարարական սարքավորումները, բացառելու համար նավթամթերքի արտահոսքերը:</li> <li>Տրանսպորտային միջոցների և սարքավորումների/գործարանների տեխնիկական սպասարկում, որը պետք է իրականացվի այդ նպատակով նախատեսված տարածքներում (արտադրամասերում): Եթե տրանսպորտային միջոցների սպասարկումն անհրաժեշտ է կատարել տեղում, ապա պետք է օգտագործվեն արտահոսքերի կանխարգելման տակդիրներ և հավաքածուներ, իսկ սպասարկումը իրականացնել ջրահոսքերից անվտանգ հեռավորության վրա (առնվազն 100 մ):</li> <li>Բոլոր ժամանակավոր վառելիքի տարողությունները և վառելիքի պահեստավորման տարածքները պետք է տեղակայված լինեն ցանկացած մակերևութային ջրային հոսքերից և ավազաններից առնվազն 100 մ հեռավորության վրա:</li> <li>Բոլոր վառելիքի/նավթի/քիմիական տարաները պետք է տեղադրվեն ապահովված, ծածկված տարածքում՝ երկրորդական տակդիրների վրա, որոնց ունեն տարաների 110% ծածկալ:</li> <li>Բոլոր վառելիքով աշխատող ստացիոնար սարքավորումները պետք է տեղադրված լինեն տակդիրի վրա՝ վառելիքի/յուղի ցանկացած արտահոսք դեպի միջավայր կանխելու համար:</li> <li>Չմաքրված կեղտաջրերի արտահոսքը մակերևութային ջրային ավազան խստիվ արգելված է:</li> <li>Մաքրված կեղտաջրերի արտահոսքերը պետք է համապատասխանեն սահմանային թույլատրելի նորմերին և լիցենզիայի/թույլտվության պահանջներին:</li> <li>Ցեմենտով աղտոտված ջրի ուղղակի արտահոսքը մակերևութային ջրեր խստիվ արգելվում է:</li> <li>Շինհրապարակներում բետոնե բեռնատարների վնասումն արգելվելու է, եթե շինհրապարակում այդ նպատակով հատուկ բետոնե վնասում</li> </ul>	<p>Թունելային ջրերի կառավարման պլան</p> <p>Արտահոսքերի կառավարման պլան</p> <p>Կեղտաջրերի և հեղեղաջրերի կառավարման պլան</p> <p>Վտանգավոր կյուրերի կառավարման պլան</p> <p>Հողի բերրի շերտի կառավարման պլան</p> <p>Բետոնի գործարանի կառավարման պլան</p> <p>Շինարարական ճամբարի կառավարման պլան</p>	<p>ՊԱԻ՝ Շին. Կապալառու</p> <p>Հ՝ Վերահսկող ճարտարագետ, ՃԴ</p> <p>Մ՝ Վերահսկող ճարտարագետ</p>	<p>Բոլոր համապատասխան կառավարման պլանները մշակվում և հաստատվում են նախքան շինարարությունը սկսելը:</p> <p>Բոլոր նշված մեղմացնող միջոցառումներն արդյունավետորեն իրականացվում են շինարարության ընթացքում:</p>	<p>Գործիքային չափումների գնահատված բյուջե՝ 6400 ԱՄՆ դոլար՝ նախաշինարարական փուլում և 360000 ԱՄՆ դոլար շինարարության ընթացքում (տես Աղյուսակ 8)</p> <p>Ցուրաքանչյուր կողմի ծրագրի բյուջեներում ներառված այլ ծախսերը և ԲԱՍ-ի կառավարման ծախսերը ներկայացված են <b>Բաժին 4.6</b>-ում:</p>

Գործոնը	Առաջարկվող նվազագույն մեղմացնող/վերահսկման և բարելավման միջոցառումներ	Համապատասխան ԲԱՍ կառավարման պլան(ներ)	Պատասխանատվություն (ՊԱԽ, Հ կամ Մ) <sup>7</sup>	Թիրախ / Ցուցիչ	Մեղմացման նախնական արժեքը (ԱՄՆ դոլար) <sup>8</sup>
	<p>կայաններ չտրամադրվեն: Լվացման տարածքը պետք է ունենա անթափանց հատակ և դատարկվի, երբ 75%-ով լցված լինի:</p> <ul style="list-style-type: none"> <li>Յուղերի արտահոսքերի տեղայնացման հավաքածուներ պետք է հասանելի լինեն բոլոր շինհրապարակներում, որպեսզի անհրաժեշտության դեպքում մաքրվեն վառելիքի/յուղի/քիմիկատների պատահական արտահոսքերը:</li> <li>Ծրագրի կեղտաջրերի մաքրման կայանները պետք է կառավարվեն արտադրողի ցուցումների համաձայն իրավասու անձնակազմի կողմից, իսկ արտահոսքերը պետք է պարբերաբար վերահսկվեն: Եթե արտահոսքերը չեն մշակվում պահանջվող ստանդարտներով, կեղտաջրերը պետք է պատասխանատու կերպով հեռացվեն լիցենզավորված ընկերության կողմից:</li> <li>Ծրագրի ցանկացած սեպտիկ տարա պետք է պատրաստված լինի անթափանց նյութից և պարբերաբար պատասխանատու կերպով դատարկվի լիցենզավորված ընկերության կողմից:</li> <li>Մակերևութային ջրային ավազանները/գետերը պետք է հատել միայն կամուրջներով:</li> <li>Պետք է տեղադրվեն կեղտաջրերի կայանքներ՝ շինարարության ընթացքում թունելներից (և հատկապես Բարգուշատի թունելից) ջրահեռացման կամ դրենաժային ջրերի հավաքման/մշակման համար՝ նախքան բացթողումը կամ տեղանքից հեռացնելը: Մաքրումը պետք է նպաստի նվազագույնը նստեցմանը և չեզոքացման գործառույթին՝ բարձր pH մակարդակը նվազեցնելու համար:</li> <li>Հեղեղաջրերի արտահոսքերը և նավթային ջրանջատիչները պետք է կանոնավոր սպասարկվեն և պահպանվեն՝ ապահովելու համար, որ դրանք մնան արդյունավետ և ժամանակի ընթացքում չհագեցվեն և կամ արգելափակվեն:</li> </ul>				
Թափոններ (ներառյալ վտանգավոր թափոնները) և հանույթը	<ul style="list-style-type: none"> <li>Կապալառուն բացահայտել և գնահատել բոլոր տեսակի թափոնների ակնկալվող քանակները, որոնք կառաջանան շինարարության փուլում:</li> <li>Թափոնների յուրաքանչյուր տեսակ պետք է գնահատվի թափոնների կառավարման հիերարխիայի համեմատ՝ ուսումնասիրելու համար տեղադրում պահանջող թափոնի նվազագույն ծավալի հասցնելու տարբերակները:</li> <li>Թափոնների տեղափոխման ուղեգրերը պետք է լրացվեն շին.հրապարակից հեռացվող բոլոր թափոնների համար:</li> <li>Կապալառուն պետք է պայմանագիր կնքի թափոնների ոլորտում լիցենզավորված ընկերության/ընկերությունների հետ՝ առաջացող</li> </ul>	Թափոնների կառավարման պլան (ներառյալ Հողային հանույթի տեղադրման ենթապլան)	ՊԱԽ՝ Շին. կապալառու Հ՝ Վերահսկող ճարտարագետ, ՃԴ, վարկատուներ (Հողային հանույթի տեղադրման ենթապլան)	Թափոնների կառավարման պլանը և Հողային հանույթի տեղադրման ենթապլանը մշակված և հաստատված է մինչ շինարարության մեկնարկը:  Բոլոր հատուկ մեղմացնող միջոցառումները	Ներառված է յուրաքանչյուր կողմի նախագծի բյուջեում

Գործոնը	Առաջարկվող նվազագույն մեղմացնող/վերահսկման և բարելավման միջոցառումներ	Համապատասխան ԲԼՍ կառավարման պլան(ներ)	Պատասխանատվություն (ՊԼԻ, Հ կամ Մ) <sup>7</sup>	Թիրախ / Ցուցիչ	Մեղմացման նախնական արժեքը (ԱՄՆ դոլար) <sup>8</sup>
	<p>Թափոնները պատասխանատու կերպով հավաքելու և հեռացնելու համար:</p> <ul style="list-style-type: none"> <li>Նյութերի անվտանգության անձնագրերը պետք է տրամադրվեն և հեշտությամբ հասանելի լինեն ամենուր, որտեղ պահվում են վտանգավոր թափոններ:</li> <li>Վտանգավոր թափոնների հավաքման տարողությունները պետք է հստակ պիտակավորված լինեն:</li> <li>Վտանգավոր թափոնների պահեստավորման տարածքները պետք է լինեն նշագրված, լավ լուսավորված և օդափոխվող, ծածկվող, փակվող և ունենան անթափանց հատակ:</li> <li>Հեղուկ թափոնները պետք է պահվեն արտահոսքերից պաշտպանված, փակ տարաներում:</li> <li>Ցանկացած հեղուկ թափոնի համար պետք է տրամադրվի համապատասխան երկրորդային տակդիր՝ թափոնի տարայի ծավալի 110%-ի չափով:</li> <li>Առաջացող թափոնները պետք է առանձնացվեն սկզբնաղբյուրում՝ կրկնակի օգտագործման կամ վերամշակման համար:</li> <li>Վերամշակման ենթակա թափոնները պետք է հավաքվեն/պահվեն հատուկ, առանձին՝ հստակ պիտակավորված, տարաներում (օրինակ՝ թուղթ, փայտ, մետաղ, ապակի, պլաստիկ):</li> <li>Բոլոր թափոնների տարաները պետք է ունենան ապահով փակվող կափարիչներ:</li> <li>Անհամատեղելի վտանգավոր թափոնները պետք է պահվեն առանձին:</li> <li>Վտանգավոր թափոնների պահեստավորման վայրերը պետք է կահավորել արտահոսքերի համար նախատեսված պարագաներով, աչքերի լվացման սարքերով և կրակմարիչներով:</li> <li>Ավելորդ հողային հանույթը պետք է հեռացվի միայն սահմանված վայրեր:</li> </ul>		<p>Մ՝ Վերահսկող ճարտարագետ</p>	<p>արդյունավետ իրագործված են շինարարության ընթացքում:</p>	
<p>Հող</p>	<ul style="list-style-type: none"> <li>Տակդիրները պետք է տեղադրվեն ցանկացած անշարժ շինարարական սարքավորման տակ՝ վառելիքի/յուղի արտահոսքը որսալու համար:</li> <li>Շինիրապարակները վառելիքի/յուղի/քիմիկատների պատահական արտահոսքերից մաքրելու համար պետք է համալրված լինեն արտահոսքերի տեղայնացման և մաքրման հավաքածուներով:</li> <li>Վառելիքի, շարժիչի յուղի, քիմիական նյութերի և այլնի անվերահսկելի արտահոսքի դեպքում աշխատանքային գործունեության ընդհատում և աղտոտված հողի տեղայնացում և մաքրում՝ հեռացնելով աղտոտված հողի շերտը (որպես վտանգավոր թափոն) ու վերականգնելով հողի նոր շերտով:</li> </ul>	<p>Արտահոսքերի կառավարման պլան</p> <p>Վտանգավոր նյութերի կառավարման պլան</p> <p>Թափոնների կառավարման</p>	<p>ՊԼԻ՝ Շին. կապալառու</p> <p>Հ՝ Վերահսկող ճարտարագետ, ՃԴ, վարկատուներ (Հողային հանույթի տեղադրման ենթապլան)</p>	<p>Բոլոր կառավարման պլանները մշակվում և հաստատվում են նախքան շինարարության մեկնարկը:</p> <p>Բոլոր նշված մեղմացնող միջոցառումներն արդյունավետորեն</p>	<p>Ներառված յուրաքանչյուր կողմի ծրագրի բյուջեն և ԲՎԱԿ-ի կառավարման ծախսերը ներկայացված են <b>Բաժին 4.6</b>-ում</p>

Գործոնը	Առաջարկվող նվազագույն մեղմացնող/վերահսկման և բարելավման միջոցառումներ	Համապատասխան ԲԱՍ կառավարման պլան(ներ)	Պատասխանատվություն (ՊԱԻ, Հ կամ Մ) <sup>7</sup>	Թիրախ / Ցուցիչ	Մեղմացման նախնական արժեքը (ԱՄՆ դոլար) <sup>8</sup>
	<ul style="list-style-type: none"> <li>Հնարավորության դեպքում վերոգտագործել հողային հանույթը: Ավելորդ մնացորդը տեղադրել սահմանված վայրերում:</li> <li>Բեռնատարների և շինարարական մեքենաների սպասարկումը, լվանալը վերալիցքավորումը պետք է իրականացվի ոչ թե անպաշտպան գետնի վրա, այլ անջրանցիկ մակերեսով հատուկ տարածքներում:</li> <li>Վառելիքը կպահվի սահմանված վայրերում, կրկնակի երեսպատված տարաներում կամ տարողություններում որոնք տեղադրված են պաշտպանված բաժանարար հորում, որը հագեցած է յուղակայուն ծածկով: Այս հորի ծածկալը պետք է գերազանցի տեղադրված տարողության առավելագույն ծածկալը առնվազն 10%-ով:</li> <li>Աղտոտող նյութերի պատահական թափվելու/արտահոսքի դեպքում աղտոտված հողն անմիջապես պետք է հեռացվի և մշակվի որպես վտանգավոր թափոններ:</li> </ul>	<p>պլան (ներառյալ հողային հանույթի տեղադրման ենթապլանը)</p> <p>Կեղտաջրերի և հեղեղաջրերի կառավարման պլան</p>	<p>Մ՝ Վերահսկող ճարտարագետ</p>	<p>իրականացվում են շինարարության ընթացքում:</p>	
Հողի բերրի շերտ	<ul style="list-style-type: none"> <li>Հեռացնել հողի բերրի շերտը (ցանկալի է չոր պայմաններում) և պահել առանձին՝ կանխելով գրունտի հետ խառնվելը, մինչև աշխատանքների ավարտը, որպեսզի պահպանվի բնական սերմունակությունը:</li> <li>Տեղակայել հողի բերրի շերտի պաշարները ցանկացած ջրահոսքից առնվազն 50 մ հեռավորության վրա՝ ջրի տիղմավորումից խուսափելու համար:</li> <li>Հողի բերրի շերտի պաշարները չպետք է տեղակայվեն ապագա պլանավորված պեղումների վայրերին կից:</li> <li>Հողի բերրի շերտի կույտերի բարձրությունը չպետք է գերազանցի 3 մ-ը:</li> <li>Հողի բերրի շերտի կույտերի թեքությունը չպետք է գերազանցի 25°-ը:</li> <li>Իրականացնել պահվող հողի բերրի շերտի պաշարների պիտակավորումը:</li> <li>Որտեղ բնական բուսականությունը բացակայում է, հողի բերրի շերտի պաշարները ծածկել՝ հողի Էրոզիայից խուսափելու համար:</li> <li>Հողի բերրի շերտի պաշարները ցանկապատել՝ Ծրագրի մեքենաների մուտքն ու խտացումը կանխելու համար:</li> <li>Կառուցել ջրահեռացման ուղիներ հողի բերրի շերտի պաշարների շուրջը որպեսզի արտահոսքը հեռացումը ապահովվելու համար, եթե պահանջվում է:</li> </ul>	<p>Հողի բերրի շերտի կառավարման պլան</p>	<p>ՊԱԻ՝ Շին. կապալառու</p> <p>Հ՝ Վերահսկող ճարտարագետ, ՃԳ</p> <p>Մ՝ Վերահսկող ճարտարագետ</p>	<p>Հողի բերրի շերտի կառավարման պլանը մշակվում և հաստատվում է մինչև շինարարության մեկնարկը:</p> <p>Բոլոր նշված մեղմացնող միջոցառումներն արդյունավետորեն իրականացվում են շինարարության ընթացքում</p>	<p>Ներառված յուրաքանչյուր կողմի ծրագրի բյուջեն և ԲԱՄԱ-ի կառավարման ծախսերը ներկայացված են <b>Բաժին 4.6</b>-ում</p>
Վտանգավոր նյութեր	<ul style="list-style-type: none"> <li>Նյութերի անվտանգության անձնագրերը պետք է տրամադրվեն և հեշտությամբ հասանելի լինեն ամենուր, որտեղ պահվում են վտանգավոր նյութեր:</li> <li>Վտանգավոր նյութերի գույքագրումը պետք է պահպանվի և հեշտությամբ հասանելի լինի ամենուր, որտեղ պահվում են վտանգավոր նյութեր:</li> </ul>	<p>Վտանգավոր նյութերի կառավարման պլան</p>	<p>ՊԱԻ՝ Շին. կապալառու</p> <p>Հ՝ Վերահսկող ճարտարագետ, ՃԳ</p>	<p>Վտանգավոր նյութերի կառավարման պլանը մշակվում և հաստատվում է մինչև</p>	<p>Ներառված յուրաքանչյուր կողմի ծրագրի բյուջեն և ԲԱՄԱ-ի կառավարման ծախսերը</p>

Գործոնը	Առաջարկվող նվազագույն մեղմացնող/վերահսկման և բարելավման միջոցառումներ	Համապատասխան ԲևՍ կառավարման պլան(ներ)	Պատասխանատվություն (ՊԱԻ, Հ կամ Մ) <sup>7</sup>	Թիրախ / Ցուցիչ	Մեղմացման Նախնական արժեքը (ԱՄՆ դոլար) <sup>8</sup>
	<ul style="list-style-type: none"> <li>Վտանգավոր նյութերի տարաները պետք է հստակ պիտակավորվեն՝ ըստ պարունակության և վտանգների:</li> <li>Վտանգավոր նյութերի պահեստավորման վայրերը պետք է հստակ նշագրվեն:</li> <li>Վտանգավոր նյութերի պահեստավորման տարածքները պետք է լավ լուսավորված լինեն, օդափոխվեն, ունենան անթափանց հատակ և հատուկ ջրահեռացում, լինեն ծածկված և փակվող:</li> <li>Վտանգավոր հեղուկները (ներառյալ յուղերը և քիմիական նյութերը) պետք է պահվեն արտահոսքից պաշտպանված, փակ տարաներում՝ համապատասխան երկրորդային տակդիրներով, որոնք ունեն տարայի ծավալի 110%-ը:</li> <li>Անհամատեղելի վտանգավոր նյութերը չպետք է պահվեն միասին:</li> <li>Վտանգավոր նյութերի պահեստավորման վայրերը հագեցնել աչքերի լվացման սարքերով և կրակմարիչներով:</li> <li>Վտանգավոր նյութերի պահեստավորման/օգտագործման վայրերում պետք է տրամադրվեն համապատասխան և լիովին համալրված արտահոսքերի տեղայնացման և հավաքման հավաքածուներ:</li> </ul>		Մ՝ Վերահսկող ճարտարագետ	<p>Հինարարության մեկնարկը:</p> <p>Բոլոր նշված մեղմացնող միջոցառումներն արդյունավետորեն իրականացվում են շինարարության ընթացքում</p>	Ներկայացված են <b>Բաժին 4.6</b> -ում
Կենսաբազմազանություն	<p>Իրականացնել մեղմացնող միջոցառումներ, որոնք նախատեսված են Կենսաբազմազանության միջոցառումների պլանով (և այլ պլաններով, որոնք պետք է մշակվեն և իրագործվեն Կենսաբազմազանության միջոցառումների պլանով, օրինակ՝ Ինվազիվ տեսակների կառավարման պլանով և Կենսաբազմազանության փոխհատուցման կառավարման պլանով:</p> <p><b>Հավելված 5</b>-ում նշված վայրի կենդանիների անցուղիների կազմակերպման հետ կապված մեղմացնող միջոցառումներ:</p>	<p>Կենսաբազմազանության միջոցառումների պլան</p> <p>Ինվազիվ տեսակների կառավարման պլան և Կենսաբազմազանության փոխհատուցման կառավարման պլան</p>	<p>Պ՝ ՃԴ, ԾԻԳ և Վերահսկող ճարտարագետ</p> <p>Ի՝ Շին. կապալառու</p> <p>Հ՝ Վերահսկող ճարտարագետ, ՃԴ, վարկատուներ</p> <p>Մ՝ Վերահսկող ճարտարագետ</p>	<p>Կենսաբազմազանության միջոցառումների պլանը մշակվում և հաստատվում է մինչև շինարարական կապալառուի ընտրության մրցույթի գործընթացը:</p> <p>Կենսաբազմազանության այլ ծրագրեր մշակվել են մինչև շինարարությունը:</p> <p>Բոլոր նշված մեղմացնող միջոցառումներն արդյունավետորեն իրականացվում են շինարարության ընթացքում:</p>	<p>Նախնական արժեքը՝ 1.5-2 մլն. ԱՄՆ դոլար է (տես <b>Բաժին 4.6</b>-ը):</p> <p>Այլ ծախսերը ներառված են յուրաքանչյուր կողմի ծրագրի բյուջեում, ԲԱԱԱ կառավարման ծախսերը ներկայացված են <b>Բաժին 4.6</b>-ում:</p>

Գործոնը	Առաջարկվող նվազագույն մեղմացնող/վերահսկման և բարելավման միջոցառումներ	Համապատասխան ԲԱՍ կառավարման պլան(ներ)	Պատասխանատվություն (ՊԼԻ, Հ կամ Մ) <sup>7</sup>	Թիրախ / Ցուցիչ	Մեղմացման նախնական արժեքը (ԱՄՆ դոլար) <sup>8</sup>
Լանդշաֆտը և տեսողական ընկալումը	<ul style="list-style-type: none"> <li>Մեղմացման կրիտիկական պահանջը Որոտնավանքին հարող առաջարկվող ճանապարհահատվածի փոփոխությունն է՝ նվազեցնելու բացասական տեսողական ազդեցությունը այս խիստ նշանակալի ժառանգության ռեսուրսի և դրա մակարդման վրա և դրանով իսկ նվազեցնելով տեսողական ազդեցությունները ընդունելի մակարդակի: Եթե ծրագիծը հնարավոր էր ուղղվել դեպի հովտի հատակը, ապա տեղի կունենար կտրման-լցման ծավալների կրճատում և կնվազեր կամրջի չափը և կփոխվեր դրա դիրքը:</li> <li>Բոլոր հանգամանքներում, որտեղ պետք է կառուցվեն հենապատեր, դրանք պետք է լանդշաֆտային լինեն, որպեսզի նվազեցնեն առկա լանդշաֆտի հետ համադրումը և առնվազն լանդշաֆտի վրա շատ ավելի փոքր ազդեցություն ունենալ: Կանաչապատումը կարող է պահանջել ճանապարհների հատումների վերելքի աստիճանականացում, որն այնուհետ լավագույնս կարող է իրականացվել որպես շինարարության փուլի մաս:</li> </ul>	Մշակութային ժառանգության կառավարման պլան	Պ՝ ՃԴ-ը տեխնիկական խորհրդատուի աջակցությամբ  Ի՝ Շին. կապալառու  Հ՝ Վերահսկող ճարտարագետ, ՃԴ, վարկատուներ  Մ՝ Վերահսկող ճարտարագետ	Նախագծային փոփոխությունները ուսումնասիրված և իրականացված են, եթե անհնար է, ապա պետք է հստակ հիմնավորում ներկայացնել	Վերադասավորում Որոտնավանքի մոտ՝ ՏԿԵՆ-ի կառավարության, ինչպես նաև այլ շահագրգիռ կողմերի հետ համաձայնեցված  Կապալառուից կպահանջվի հատուկ նախահաշիվ
Տնտեսություն և զբաղվածություն	<ul style="list-style-type: none"> <li>Առաջնահերթություն տալ Ծրագրի ազդեցության տակ գտնվող համայնքներում (և, մասնավորապես, տուժած գյուղերից) զբաղվածությունը՝ տեղական հավաքագրման արշավների միջոցով:</li> <li>Կազմակերպել տեղեկատվական արշավներ Ծրագրի ազդեցության տակ գտնվող համայնքներում՝ խթանելու կանանց դիմումը Ծրագրի տարբեր պաշտոններում:</li> <li>Մշակել և իրականացնել վերապատրաստման ծրագիր՝ տեղական մարդկային ռեսուրսները Ծրագրի աշխատուժի կարիքներին համապատասխան վերապատրաստելու համար:</li> <li>Առաջնահերթություն տալ Ծրագրի ազդեցության տակ գտնվող համայնքներից ապրանքների և ծառայությունների ձեռք բերմանը:</li> <li>Սահմանել կանանց զբաղվածության թիրախ՝ Ծրագրի շինարարական աշխատուժի առնվազն 15%-ի չափով:</li> <li>Նույնականացնել Ծրագրի ազդեցության տակ գտնվող համայնքներում աշխատողներին տեղավորելու հարմար վայրեր:</li> <li>Կազմակերպել հատուկ դասընթացներ տեղական կին ձեռներեցների համար՝ ձեռնարկատիրական հմտությունները զարգացնելու և ամրապնդելու նպատակով:</li> <li>Նախքան շինարարական աշխատանքները կայանվել ազդվող գյուղերի մեղվապահների հետ և քարտեզագրել մեղվաբուծական փեթակների տեղանքները շինհրապարակների և մուտքի ճանապարհների դիմաց (դեռ պետք է որոշվեն): Եթե մեղվաբուծական փեթակները գտնվում են շինհրապարակից և մուտքի ճանապարհներից 90-100 մ-ից ավելի մոտ</li> </ul>	Գնումների պլան  Շինարարության փուլի հավաքագրման պլան  Հավաքագրման քաղաքակա- նություն	ՊԼԻ՝ Շին. կապալառու  Հ՝ Վերահսկող ճարտարագետ, ՃԴ  Մ՝ Վերահսկող ճարտարագետ	Գնումների պլանը, մշակվում և հաստատվում են մինչ շինարարության մեկնարկը Հավաքագրման պլանը և Հավաքագրման քաղաքանությունը  Բոլոր նշված մեղմացնող միջոցառումներն արդյունավետորեն իրականացվում են շինարարության ընթացքում:	Այլ ծախսերը ներառված են յուրաքանչյուր կողմի ծրագրի բյուջեում, ԲԱՍԿ կառավարման ծախսերը ներկայացված են <b>Բաժին 4.6</b> -ում:

Գործոնը	Առաջարկվող նվազագույն մեղմացնող/վերահսկման և բարելավման միջոցառումներ	Համապատասխան ԲԱՍ կառավարման պլան(ներ)	Պատասխանատվություն (ՊԱԻ, Հ կամ Մ) <sup>7</sup>	Թիրախ / Ցուցիչ	Մեղմացման նախնական արժեքը (ԱՄՆ դոլար) <sup>8</sup>
	(պահպանողական մոտեցում), օգնել մեղվապահներին մեղվաբուծական փեթակները տեղափոխել շին. աղբյուրներից ավելի հեռու:				
Աշխատանք և աշխատանքային պայմաններ	<ul style="list-style-type: none"> <li>Մշակել աշխատողների վարքագծի կանոնները, որոնք կահամանեն վարքագծի ակնկալվող չափանիշները և կստորագրվեն բոլոր կապալառուների և ենթակապալառու աշխատողների կողմից՝ որպես իրենց պայմանագրի մաս:</li> <li>Բոլոր աշխատողներին պետք է տրամադրվեն հավասար հնարավորություններ:</li> <li>Մշտապես ապահովել խմելու ջրի հուսալի և բավարար մատակարարումը:</li> <li>Ստեղծել ճաշարաններ/հանգստի գոտիներ՝ լվացարաններով:</li> <li>Բոլոր աշխատավայրերում աշխատողներին ապահովել զուգարանակոնքերով և լվացարաններով, կանանց համար՝ առանձին զուգարաններ:</li> <li>Շինարարական ճամբարները համալրել բուժ.կետով, որը կսպասարկի բոլոր աշխատողներին:</li> <li>Կապալառուները յուրաքանչյուր շինարարական ճամբարում կնշանակեն բողոքարկման համար կին պատասխանատու («վստահելի») գեներային զգայուն հարցերի համար, որի կոնտակտային տվյալները հասանելի կլինեն բոլոր կին աշխատողներին:</li> <li>Մշակել և իրագործել աշխատակիցների բողոքարկման մեխանիզմը, որտեղ բոլոր բողոքները կգրանցվեն և կիտեռվեն նշված ժամկետներում մինչև ընդունելի ավարտը: Բողոքարկման մեխանիզմը կապահովի գաղտնի ուղիները, այդ թվում՝ Գեներային Հիմքով Բռնություն և Ոտնձգություն (ԳՀԲՈ) միջադեպերի մասին գեկուցելու և հետաքննելու համար, ինչպես նաև անվտանգ եղանակով աջակցության տրամադրումը:</li> <li>Աշխատողների վարքագծի կանոնների գեներային տարրերի վերաբերյալ վերապատրաստման դասընթացներ անցկացնել Կապալառուի և վերահսկող ճարտարագետի անձնակազմի համար:</li> <li>Իրականացնել տեղեկատվական արշավներ՝ ուղղված ԳՀԲՈ-ի ռիսկերը կանխելուն և Ծրագրի ազդեցության տակ գտնվող գյուղերի աշխատակիցների և բնակիչների իրազեկվածության բարձրացմանը:</li> <li>Արգելել անչափահասների աշխատանքի, ներառյալ 18 տարեկանից ցածր աշխատողների աշխատանքի հետ կապված ազգային օրենքների և միջազգային չափանիշներին համապատասխանելը:</li> <li>Հարկադիր աշխատանքի ցանկացած ձև արգելված է:</li> </ul>	<p>Աշխատանքի և աշխատանքային պայմանների կառավարման պլան (և աշխատողների բնակեցման պլանի ենթապլան)</p> <p>Աշխատողների բողոքարկման մեխանիզմ</p> <p>Աշխատողների վարքագծի կանոններ</p> <p>Շինարարական ճամբարի կառավարման պլան</p> <p>(հիմնված աշխատուժի բնակեցման տարբերի ռիսկերի գնահատման վրա)</p> <p>Դեմոքրիիզացման պլան</p>	<p>ՊԱԻ՝ Շին. կապալառու</p> <p>Հ՝ վերահսկող ճարտարագետ, ՃԴ, վարկատուներ</p> <p>Մ՝ վերահսկող ճարտարագետ</p>	<p>Բոլոր համապատասխան կառավարման պլանները / կանոնները / մեխանիզմները մշակվում և հաստատվում են մինչև շինարարության մեկնարկը:</p> <p>Բոլոր նշված մեղմացնող միջոցառումներն արդյունավետորեն իրականացվում են շինարարության ընթացքում:</p>	<p>Այլ ծախսերը ներառված են յուրաքանչյուր կողմի ծրագրի բյուջեում, ԲԱՄՎ կառավարման ծախսերը ներկայացված են <b>Բաժին 4.6</b>-ում:</p>

Գործոնը	Առաջարկվող նվազագույն մեղմացնող/վերահսկման և բարելավման միջոցառումներ	Համապատասխան ԲևՍ կառավարման պլան(ներ)	Պատասխանատվություն (ՊԱԻ, Հ կամ Մ) <sup>7</sup>	Թիրախ / Ցուցիչ	Մեղմացման նախնական արժեքը (ԱՄՆ դոլար) <sup>8</sup>
	<ul style="list-style-type: none"> <li>• Աշխատանքը սկսելուց առաջ աշխատողներին տրամադրել իրենց պայմանագրի պատճենները, որոնք կներառեն հստակ և թափանցիկ տեղեկատվություն նրանց աշխատավարձի, նպաստների և աշխատանքային պայմանների վերաբերյալ (աշխատանքի ժամեր և արտաժամյա աշխատանք, տարեկան արձակուրդի իրավունքներ, կացարանի իրավունքներ և այլն):</li> <li>• Պարբերաբար անցկացնել բուժ. զննումներ համոզվելու համար, որ բոլոր աշխատողների առողջական վիճակը թույլատրելի է ստանձնած աշխատանքը կատարելու համար:</li> <li>• Խոցելի խմբերի անդամների աշխատանքի տեղավորումը չպետք է խանգարուի:</li> <li>• Բոլոր աշխատողների հետ անցկացնել իրահանգավորում (ներառյալ ԲԱԱՎ-ի հետ կապված հարցերը), ինչպես նաև հատուկ ուսուցում, որը վերաբերում է նրանց մասնագիտական գործառնություններին՝ համաձայն Կապալառուի կողմից մշակված վերապատրաստման ծրագրի:</li> <li>• Շինարարական ճամբարում բոլոր աշխատողներին տրամադրել բնակեցման համապատասխան պայմաններ և ծառայություններ՝ համաձայն ազգային օրենսդրության և ՎՉԵԲ ստանդարտների, ներառյալ ՎՉԵԲ/ՄՖԿ-ի «Աշխատողների բնակեցման գործընթացներ և ստանդարտներ» 102 ուղեցույցը և Աշխատանքի միջազգային կազմակերպության 1961թ.-ի Աշխատողների բնակեցման առաջարկությունները (№115):</li> <li>• Տրամադրել համարժեք Անհատական Պաշտպանության Միջոցներ (ԱՊՄ) երկու սեռերի համար, որոնք հարմարեցված են անտրոպոմետրիկ բնութագրերով տղամարդկանց և կանանց աշխատողների համար:</li> <li>• Մշակել Ղեմոբիլիզացման պլան շինարարության առաջին վեց ամիսների ընթացքում, որը՝             <ul style="list-style-type: none"> <li>○ Շինարարության փուլում կտրամադրի Ծրագրի անմիջական աշխատակիցների խմբերի ղեմոբիլիզացման ժամանակացույցը,</li> <li>○ Կսահմանի օգուտները ղեմոբիլիզացված շինարարական անձնակազմի համար, ներառյալ, օրինակ.                     <ul style="list-style-type: none"> <li>• Իրենց ընտրությամբ հմտություններ ձեռք բերելու համար մեծահասակների ուսուցման կենտրոններում ուսման վարձի վճարում,</li> <li>• Աշխատանքային գրքույկի/հաստատման նամակի և հմտությունների/վերապատրաստման գրանցումների տրամադրում:</li> </ul> </li> </ul> </li> </ul>				

Գործոնը	Առաջարկվող նվազագույն մեղմացնող/վերահսկման և բարելավման միջոցառումներ	Համապատասխան ԲԱՍ կառավարման պլան(ներ)	Պատասխանատվություն (ՊԱԻ, Հ կամ Մ) <sup>7</sup>	Թիրախ / Ցուցիչ	Մեղմացման նախնական արժեքը (ԱՄՆ դոլար) <sup>8</sup>
Հասանելիություն և տեղական կապ	<ul style="list-style-type: none"> <li>Այսպիսով ապահովել ալյուրտրանսպային ժամանակավոր մուտք դեպի հողամասեր և բնական ռեսուրսներ (արոտավայրեր, հողատարածքներ, բիզնեսներ, անտառներ և գետեր), որտեղ մուտքը ժամանակավորապես սահմանափակված է կլիմայի շինարարական աշխատանքների պատճառով:</li> <li>Համոզվել, որ կապի տեղական պայմանավորվածությունները համահունչ են Երթևեկության կառավարման պլանին և Շահառուների ներգրավման պլանի պահանջներին:</li> <li>Այսպիսով Տարաբնակեցման պլանում չընդգրկված և մուտքի սահմանափակմամբ հողատարածքները ապահովել ալյուրտրանսպային մշտական մուտքով:</li> <li>Կազմակերպել լրացուցիչ անցումներ տնային կենդանիների համար՝ երկարացնելով նախագծված հեղեղատարները կամ նախագծում ներառելով նոր անցումներ ազդակիր բնակավայրերի իգական և արական սեռի բնակիչների առաջարկած վայրերում (տես <b>Հավելված 3-ը</b>):</li> </ul>	<p>Հասանելիության և տեղական կապի պլան</p> <p>Ճանապարհային երթևեկության կառավարման պլան</p>	<p>ՊԱԻ՝ Շին. կապալառու</p> <p>Հ՝ Վերահսկող ճարտարագետ, ՃԴ, վարկատուներ (Հասանելիության և տեղական կապի պլան, Աշխատանքի և աշխատանքային պայմանների կառավարման</p> <p>Մ՝ Վերահսկող ճարտարագետ</p>	<p>Բոլոր համապատասխան կառավարման պլանները մշակվում և հաստատվում են մինչև շինարարության մեկնարկը:</p> <p>Բոլոր նշված մեղմացնող միջոցառումներն արդյունավետորեն իրականացվում են շինարարության ընթացքում:</p>	<p>Այլ ծախսերը ներառված են յուրաքանչյուր կողմի ծրագրի բյուջեում, ԲԱՍԱ կառավարման ծախսերը ներկայացված են <b>Բաժին 4.6-ում</b>:</p>
Կոմունալ ծառայություններ տրանսպորտային ենթակառուցվածքներ	<p><b>Ազդեցություններ տեղական առողջապահական ենթակառուցվածքների վրա</b></p> <ul style="list-style-type: none"> <li>Շինարարական ճամբարները համալրել բուժ.կետով, համալրված որակյալ բուժանձնակազմով օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:</li> <li>Կապալառուները նախապես ծանուցում են բոլոր տեղական առողջապահական հաստատություններին աշխատուժի թվի և շինարարական աշխատանքների տևողության վերաբերյալ:</li> </ul> <p><b>Ազդեցություններ տեղական ճանապարհային ցանցի վրա</b></p> <ul style="list-style-type: none"> <li>Իրականացնել <b>Ճանապարհի աուդիտ և պայմանների ուսումնասիրություն</b> Ծրագրի տարածքում առկա ճանապարհների և կամուրջների ֆիզիկական վիճակը գնահատելու համար, որպեսզի գնահատվի ճանապարհի ծածկի վնասման և կամրջի փլուզման ռիսկերը, ii) կանխատեսվի երթևեկության ինտենսիվությունը և երթևեկության թողունակությունը, և iii) գնահատվի տրանսպորտային պատահարների ռիսկերը կոնկրետ ճանապարհային հատվածներում/հանգույցներում:</li> <li>Մշակել (հիմնվելով ճանապարհի աուդիտի և պայմանների ուսումնասիրության արդյունքների վրա) <b>շինարարական երթևեկության օպտիմալ սխեման</b>՝ համագործակցելով համապատասխան համայնքապետարանների, ճանապարհային ոստիկանության և/կամ այլ ճանապարհային ոլորտի իշխանությունների հետ: Սա պետք է</li> </ul>	<p>Ենթակառուցվածքների պաշտպանության և տեղափոխման պլան</p> <p>Ճանապարհային երթևեկության կառավարման պլան (ներառյալ ճանապարհի աուդիտը և պայմանների ուսումնասիրությունը)</p> <p>Բնակեցման ճամբարի կառավարման ենթապլան, Արտակարգ իրավիճակների</p>	<p>ՊԱԻ՝ Շին. կապալառու</p> <p>Հ՝ Վերահսկող ճարտարագետ, ՃԴ, վարկատուներ</p> <p>Մ՝ Վերահսկող ճարտարագետ</p>	<p>Բոլոր համապատասխան կառավարման պլանները / կանոնները / մեխանիզմները մշակվում և հաստատվում են մինչև շինարարության մեկնարկը:</p> <p>Բոլոր նշված մեղմացնող միջոցառումներն արդյունավետորեն իրականացվում են շինարարության ընթացքում:</p>	<p>Այս պլանի պատրաստման և իրականացման համար կմշակվի առանձին բյուջե, որը կհատկացվի Ծրագրի բյուջեից:</p> <p>Այլ ծախսերը ներառված են յուրաքանչյուր կողմի ծրագրի բյուջեում, ԲԱՍԱ կառավարման ծախսերը ներկայացված են <b>Բաժին 4.6-ում</b>:</p>

Գործոնը	Առաջարկվող նվազագույն մեղմացնող/վերահսկման և բարելավման միջոցառումներ	Համապատասխան ԲԼՍ կառավարման պլան(ներ)	Պատասխանատվություն (ՊԼԻ, Հ կամ Մ) <sup>7</sup>	Թիրախ / Ցուցիչ	Մեղմացման նախնական արժեքը (ԱՄՆ դոլար) <sup>8</sup>
	<p>օգտագործվի <b>երթևեկության կառավարման պլանի</b> մշակման և իրականացման մասին տեղեկացնելու համար՝ Նշելով</p> <ul style="list-style-type: none"> <li>○ Գոյություն ունեցող չասֆալտապատված և ասֆալտապատ ուղիների պայմանները՝ որոշելու, թե արդյոք դրանք պետք է արդիականացվեն կամ վերականգնվեն Ծրագրի ծանր տրանսպորտային միջոցների քաշը դիմակայելու համար,</li> <li>○ -Սոցիալական ենթակառուցվածքների (մասնավորապես՝ դպրոցների, մանկապարտեզների և առողջապահական հաստատությունների), բնակելի շենքերի և մշակութային ժառանգության օբյեկտների (եկեղեցիներ և գերեզմաններ, հուշարձաններ) քարտեզագրում, որոնք գտնվում են Ծրագրի տրանսպորտի կողմից օգտագործվող որևէ ճանապարհի երկայնքով գտնվող բնակավայրերում,</li> <li>○ Համապատասխան ճանապարհային նշանների առկայությունը, օրինակ. կապված արագության սահմանափակման կամ այլ հատուկ նախազգուշական նշանների հետ քարտեզագրված զգայուն սոցիալական ենթակառուցվածքների, բնակելի շենքերի և մշակութային ժառանգության վայրերի շուրջ, եթե անհրաժեշտ է դիմել լրացուցիչ նշանների տեղադրման համար՝ ապահովելու ճանապարհային և շենքերի անվտանգությունը:</li> </ul> <ul style="list-style-type: none"> <li>• Տեղեկացնել տեղացի բնակիչներին շինարարական երթևեկության հնարավոր ազդեցությունների մասին շինարարության մեկնարկից առնվազն երկու շաբաթ առաջ:</li> <li>• Շինարարությունից հետո վերականգնել Ծրագրի կողմից օգտագործվող հանրային ճանապարհները մինչ ծրագրի կամ ավելի լավ վիճակում:</li> <li>• Համակարգել ուղու/ճանապարհի արդիականացման կամ վերականգնման ցանկացած գործողություն համայնքային և ճանապարհային իշխանությունների, տեղական օգտագործողների և այլ շահագրգիռ կողմերի հետ, ըստ անհրաժեշտության:</li> </ul> <p><b>Ազդեցություններ հանրային ծառայությունների վրա</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Կատարել նախաշինարարական հետազոտություն՝ հաստատելու բոլոր կոմունալ ձեռնարկությունների գտնվելու վայրերը, որոնց վրա կարող է ազդել հիմնական ճանապարհային գծի և սպասարկման ճանապարհների կառուցումը:</li> <li>• Մշակել մանրամասն նախագծեր յուրաքանչյուր ազդակիր ձեռնարկության տեղափոխման համար, եթե անուղղելի վնասն անխուսափելի է, հիմնվելով կոմունալ ընկերությունից ստացված տեխնիկական պայմանների վրա և հայկական նախագծային</li> </ul>	<p>պատրաստության և արձագանքման պլան</p>			

Գործոնը	Առաջարկվող նվազագույն մեղմացնող/վերահսկման և բարելավման միջոցառումներ	Համապատասխան ԲԱՍ կառավարման պլան(ներ)	Պատասխանատվություն (ՊԱԻ, Հ կամ Մ) <sup>7</sup>	Թիրախ / Ցուցիչ	Մեղմացման նախնական արժեքը (ԱՄՆ դոլար) <sup>8</sup>
	<p>չափանիշներին համապատասխան: Մանրամասն նախագծերը պետք է հաստատվեն ազդակիր կոմունալ ձեռնարկությունների ղեկավարների կողմից և ներառեն կոմունալ ծառայությունների տեղափոխման ծախսերի գնահատումները:</p> <ul style="list-style-type: none"> <li>Համագործակցել կոմունալ ծառայություններ մատուցող ընկերությունների հետ՝ ապահովելու համար, որ նրանք ծանուցեն բոլոր հաճախորդներին, ովքեր կարող են տուժել ծառայության խափանումներից և կարող են հնարավորինս այլընտրանքային ծառայություններ մատուցել:</li> <li>Համոզվել, որ կոմունալ ծառայությունների վերանորոգման/տեղափոխման ծախսերը ներառված են Ծրագրի շինարարության բյուջեի մեջ:</li> </ul>				
<p>Հանրային առողջություն և աշխատանքի անվտանգություն</p>	<ul style="list-style-type: none"> <li>Երթևեկության կառավարման պլանը մշակելիս խորհրդակցել տեղական իշխանությունների հետ որոշելու համար, թե երբ պետք է կիրառվեն երթևեկության լրացուցիչ սահմանափակումներ, օրինակ՝ երբ աշակերտները գնում և վերադառնում են դպրոց, երբ մարդիկ հաճախում են եկեղեցի և գերեզմանոց (կիրառելի է որոշ ճանապարհների համար, որոնք կարող են օգտագործվել Ծրագրի մեքենաների կողմից):</li> <li>Տրամադրել վարորդների վերապատրաստման ծրագրեր՝ համոզվելու համար, որ կապալառուի և ենթակապալառուի անձնակազմը տեղյակ է համայնքի զգայունության, ինչպիսիք են տնային կենդանիների տեղաշարժի կոնկրետ ժամանակաշրջանի մասին և կենտրոնանալով լեռնային տեղանքում և վատ եղանակային պայմաններում մանևրելու, ինչպես նաև ճանապարհատրանսպորտային պատահարների դեպքում ձեռնարկվող գործուղությունների վրա:</li> <li>Տեղորոշել և նախագծել հետիոտնային անցումները՝ խորհրդակցելով տեղի բնակիչների, տեղական և քաղաքային իշխանությունների և ճանապարհային ոստիկանության մարմինների հետ (առաջարկվող վայրերի ցանկը տես <b>Հավելված 4-ը</b>):</li> <li>Ապահովել հետիոտների համար անվտանգ անցումներ՝ ներառյալ համապատասխան ազդանշանները և դրոշակակիրների օգտագործումը՝ երեխաների և ընտանիքների ներկայության մասին շինարարական երթևեկությանը զգուշացնելու համար:</li> <li>Ծրագրի տարածքի դպրոցների համար կազմակերպել ճանապարհային անվտանգության իրազեկման մի շարք հանդիպումներ: Դրանք կանցկացվեն վեցամսյա կտրվածքով՝ շինարարության ողջ ընթացքում: Իրազեկման դասընթացների շրջանակներում երեխաներին կտրվեն</li> </ul>	<p>Հանրային առողջության և աշխատանքի անվտանգության պլան</p> <p>Ճանապարհային երթևեկության կառավարման պլան (ներառյալ ճանապարհի առողիտը և պայմանների ուսումնասիրությունը)</p> <p>Արտակարգ իրավիճակների պատրաստության և արձագանքման պլան</p>	<p>ՊԱԻ՝ Շին. կապալառու</p> <p>Հ՝ Վերահսկող ճարտարագետ, ՃԴ</p> <p>Մ՝ Վերահսկող ճարտարագետ</p>	<p>Բոլոր համապատասխան կառավարման պլանները / կանոնները / մեխանիզմները մշակվում և հաստատվում են մինչև շինարարության մեկնարկը</p> <p>Բոլոր նշված մեղմացնող միջոցառումներն արդյունավետորեն իրականացվում են շինարարության ընթացքում</p>	<p>Այլ ծախսերը ներառված են յուրաքանչյուր կողմի ծրագրի բյուջեում, ԲԱՄԱ կառավարման ծախսերը ներկայացված են <b>Բաժին 4.6</b>-ում</p>

Գործոնը	Առաջարկվող նվազագույն մեղմացնող/վերահսկման և բարելավման միջոցառումներ	Համապատասխան ԲևՍ կառավարման պլան(ներ)	Պատասխանատվություն (ՊԱԻ, Հ կամ Մ) <sup>7</sup>	Թիրախ / Ցուցիչ	Մեղմացման նախնական արժեքը (ԱՄՆ դոլար) <sup>8</sup>
	<p>արտացոլող կրծքանշաններ՝ ամրացնելու իրենց վերարկուներին և դպրոցական պայուսակներին:</p> <ul style="list-style-type: none"> <li>• Համոզվել, որ բոլոր շինարարական երթևեկությունը տեղի է ունենում ցերեկային ժամերին, որտեղ դա հնարավոր է:</li> <li>• Հնարավորին չափով խուսափել շինարարական մեքենաների տեղաշարժից ազդվող ճանապարհների պիկային երթևեկության ժամանակաշրջաններում (տոնական և առավոտյան և երեկոյան երթևեկության պիկերին):</li> <li>• Տեղադրել հանրային անվտանգության վտանգի մասին տեղեկատվական վահանակներ և արտակարգ իրավիճակների կոնտակտային տվյալներ:</li> <li>• Սահմանել և հստակ նշել ժամանակավոր շրջանցումները տեղական մոտեցման ճանապարհների համար, որտեղ անհրաժեշտ է:</li> <li>• Ապահովել, որ հանրային վայրերում լուսավորությունը բավարար է և պահպանվում է, հատկապես գեղեցիկ բռնության և զինվորային ժամերին շինարարության և ճանապարհային անվտանգության ռիսկերը նվազեցնելու համար:</li> <li>• Ապահովել համապատասխան անվտանգության միջոցներ՝ վտանգավոր աշխատանքային տեղամասեր չարտոնված մուտքը կանխելու համար, ներառյալ 1 մ-ից ավելի խորությամբ պեղումների բոլոր տարածքների ցանկապատումը: Կիրառել մուտքի սահմանափակումները շին.իրապարակի սահմանների կանոնավոր մշտադիտարկման միջոցով (կամ պարեկների, կամ տեսախցիկի միջոցով):</li> <li>• Աշխատողների բնակեցման ճամբարներում տեղավորել ոչ տեղացի աշխատողներին:</li> <li>• Տեղական հիվանդանոցների հետ կապ սահմանել՝ վարակիչ հիվանդությունների բռնկման դեպքում ժամանակին իրազեկումներ ստանալու համար:</li> <li>• Մշակել աշխատողների վարքագծի կանոններ, որոնք կսահմանեն աշխատողների (ներառյալ անվտանգության աշխատակիցների) վարքագծի ակնկալվող չափանիշները և տեղական բնակիչների հետ փոխգործակցության սահմանափակումները, որը կստորագրվի բոլոր կապալառուների և ենթակապալառու աշխատողների կողմից որպես իրենց պայմանագրի մաս: ԲԱԱԿ-ի ներդրումը կտարածվի Կանոնների դրույթների, ներառյալ ԳՀԲՈ-ի, սեռական ճանապարհով փոխանցվող վարակների, պատշաճ վարքագծի, մարդու իրավունքների հարգման, շահագրգիռ կողմերի հետ շփումների և ուժի պատշաճ կիրառման, մշակութային զգայունության և այլնի վրա:</li> </ul>				

Գործոնը	Առաջարկվող նվազագույն մեղմացնող/վերահսկման և բարելավման միջոցառումներ	Համապատասխան ԲԱՍ կառավարման պլան(ներ)	Պատասխանատվություն (ՊԱԻ, Հ կամ Մ) <sup>7</sup>	Թիրախ / Ցուցիչ	Մեղմացման նախնական արժեքը (ԱՄՆ դոլար) <sup>8</sup>
	<ul style="list-style-type: none"> <li>Տեղի բնակիչները, որպես շահագրգիռ կողմերի ներգրավման միջոցառումների մաս, կտեղեկացվեն Ծրագրի հանրային անվտանգության միջոցառումների մասին նախքան շինարարության մեկնարկը:</li> <li>Տեղի բնակիչները, որպես շահագրգիռ կողմերի ներգրավման միջոցառումների մաս, կտեղեկացվեն Ծրագրի բողոքարկման մեխանիզմի մասին նախքան շինարարության մեկնարկը:</li> <li>Ձեռնարկել անվտանգության բոլոր անհրաժեշտ նախագծուշակայան միջոցները՝ կանխելու վտանգավոր նյութերի և Ծրագրի տրանսպորտային միջոցների/սարքավորումների գողությունը կամ չարտոնված օգտագործումը՝ անհրաժեշտության դեպքում տրամադրելով համապատասխան կողպեքներ և/կամ փակվող փականներ:</li> <li>Այսպիսով ջրելու կամ փոշու ճնշման ավելի արդյունավետ միջոցներ, ինչպիսիք են քիմիական կապակցիչները, այս զգայուն վայրերում՝ գարնան և ամառվա չոր օրերին ճանապարհային փոշու արտանետումները վերահսկելու համար:</li> </ul>				
